
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅԲԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿՈՒՐՍԻՍՏԸ ԵՂԵՒՆԻՆ



G-HIS
IANT
1972

1297




Ս· Էջմիածնի Մայր Տաճարը

ԹՈՐԳՈՄ ԱՐՔ· ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿՈՐՈՒՍՏԸ ԵՂԵՌՆԻՆ

ՆԻՒ ԵՈՐՔ, Ն· Ե·

1972



Ս. Սուխրանցոս Նախավկայի վանքը. ԺԴ–ԺԴ դար

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿՈՐՈՒՍՏԸ ԵՂԵՌՆԻՆ

Նախ ուրախութիւնս կը յայտնեմ Հայ Երիտասարդաց Մշակութային Միութեան կազմակերպած մշակութային ձեռնարկներուն համար: Անոր նպատակներուն անհրաժեշտութիւնը կըրկնելու պէտք չունիմ: Ուրախ եմ որ իրենք զգացեր են այդ անհրաժեշտութիւնը, կազմակերպուեր եւ մինչեւ այսօր կը չարունակեն թանկագին իրենց ծառայութիւնը հանրութեան: Եւ մենք բոլորս, կազմակերպողներուն հետ միասին նոյն ուղիղ ճամբուն մէջ կը յուսամ թէ կը մնանք, հաւատարիմ մնալով մեր ժողովուրդի հոգիին, մշակութային եւ հոգեւոր ժառանգութեան: Եւ այս՝ կենդանի գարձնելով այդ հոգին մեր ներկայի կեանքին մէջ: Զայն աճեցնելով նոր տաղանդներու ծլարձակումով, քաջալերանքով, իբրեւ կտակ ու ժառանգ թողնելու համար մեր զաւակներուն: Գեղագոյն վայելք մըն է այս որ մենք մեզի կրնանք տալ:

Պահ մը մտածեցի որ ճիշտ պիտի չըլլար ըսել Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Կորուստը Մեծ Եղեռնին եւ զայն ներկայացընել իբրեւ առանձին նիւթ: Ճիշտ պիտի չըլլար եւ հիմնապէս ճիշտ չէ, որովհետեւ Հայց. Եկեղեցւոյ կորուստը առանձին կորուստ մը չէ այլ կը պատկանի այն ազգին որուն անունով ան կը յատկանշուի: Հայ ազգին մէջ գործող եկեղեցին է Հայց. Եկեղեցին: Եւ հետեւաբար, ինչ կորուստ որ կը վերագրենք Հայց. Եկեղեցիին, իրապէս կորուստն է Հայ ազգին: Կորուստն է Հայ մշակոյթին: Տաճարներ՝ Հայ ճարտարապետական արուեստի կորուստ: Ձեռագիրներ՝ Հայ մանրանկարչութեան կորուստ: Հոգեւորականներ՝ հոգեւոր գրականութեան կորուստ: Դպրոցներ՝ կրթութեան կորուստ, դպրութեան կորուստ:

Այս իմաստով հետեւաբար ազգային եկեղեցի կոչումը իր ուղիղ նշանակութիւնը կ'առնէ: Պէտք է անշուշտ զգոյշ ըլլանք չիյնալու համար կարգ մը սխալ եզրակացութիւններու բաւիղին մէջ:

Կայ ուղիղ հասկացողութիւն մը Ազգային Եկեղեցիի: Եւ կայ սխալ հասկացողութիւն մը Ազգային Եկեղեցիի, որով յաճախ կը մեղադրուինք: Եւ ես կը հաւատամ որ անոնք որոնք գիտա-

կից են, ու միտքով պարկեշտ, ուղիղ հասկացողութեամբ միշտ կը գործածեն եւ պիտի գործածեն ազգային եկեղեցի բացատրութիւնը:

Մէկ պարբերութեամբ եթէ թույլ տրուի ինձ անդրադառնալ, պիտի ըսեմ որ Հայ Եկեղեցին ազգային եկեղեցի է այն իմաստով որ իր պաշտօնն է հայ հոգիները փրկել: Հայ Եկեղեցին մէկ գլխաւոր պաշտօն ունի միայն: Այդ է՝ հոգիներով զբաղիլ: Առաջին հերթին՝ հայ հոգիներով, հայ հոգիներու փրկութեամբ զբաղիլ: Երբ Հայ Եկեղեցին կը յաջողի անհատ հայ հոգիները փրկել, այլ անհատ հայ հոգիներէն ուրիշ բան դուրս պիտի չգայ, բայց միայն հայութեան հոգին իւրացնող, հայութեան պատմութեան մաս կազմող, հայ մշակոյթին հետաքրքրութիւնը ունեցող, հայ լեզուին, արուեստին եւ բոլոր գեղեցկութիւններուն խանդավառութիւնը ունեցող անհատներ: Իւրաքանչիւրն իր ճամբով: Իւրաքանչիւրը իր բաժակին չափովն ու ձեւով՝ հոգիի նոյն աղբիւրէն ըմպելով: Մինչեւ իսկ անոնք որոնք այսպէս ըսենք կրօնական հետաքրքրութիւն չունին, չատ դիւրաւ պէտք է խոնարհին այն պաշտօնին եւ գործին առջեւ որ Հայ Եկեղեցին կը կատարէ, եւ պէտք է կատարէ, իբրեւ հոգեւոր հաստատութիւն:

Ապրիլեան Եղեռնի հարուածը զոր մեր ժողովուրդը կրեց, վիրաւորած է Հայու Հոգին իր գոյութեան զանազան մարզերուն մէջ, եւ հետեւաբար վնասած է Հայ Ազգին ֆիզիքական եւ հոգեւոր իրականութեան, հոգեւոր մշակոյթին: Թշնամին հայ անհատներուն հոգեկան հետաքրքրութիւններուն եւ խարխափին տուած է իր ուժգին հարուածը: Այս իմաստով Հայ Եկեղեցին իր կորուստը ունեցած է: Եւ ատոր հետեւանքները, 1915–1965, մենք կը քաշենք տակաւին, թէ կրօնական եւ թէ հայրենասիրական տեսակէտէն դիտուած:

Նախ քան մանրամասնութեանց մտնելս, ըստ կարգադրութեան, Հայ տաճարներու նկարներ ցոյց պիտի տրուին պաստառի վրայ: Նաեւ, իբրեւ արտայայտութիւն այն տրամութեան, այն զգացումներուն զորս հայ մը կ'ունենայ մտածելով իր եկեղեցիին, իր հոգեւոր ժառանգութեան մասին, եւ կը տրամի՝ անոր փայլքը եւ ներքին կենսունակութիւնը կարծես կորսուած տեսնելուն, երկու քերթուածներ կան որոնք կ'ուզեմ կարդալ:

Այդ քերթուածներէն մէկը «ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ՋԱՆԳԱԿ» վերնագիրը ունի:

Մայրավանքի հին զանգակ, ահա ձու ձայնըդ նորէ՛ն
Կը փըշրըւի հոգւոյս դէմ, խոր բեկումով, ծանրօրէն.
Եւ ան այնպէ՛ս է հեռու, անհըրաւէ՛ր, վիրաւոր,
Նըմանւ հատնող օրերուս, ուր չի բացուիր յոյս մը նոր...:

Մայրավանքի զանգակ հին, հոգիիս մէջ ի՛նչ փառեհ՛ր
Դուն երգեցիր, ի՛նչ հրճուա՛նք, հպարտութի՛ւնն իմ ցեղին,

երբ ժողովուրդ մը լըմաև՝ ծնծղայ–ծնծղայ կը հնչէ՛ր՝
Կամարներով, ջահերով, հասակներով արփայիև···:

Հիմա, գիտնա՛ս, հի՛ն զանգակ՝ անարձագանգ հըրաւէր,
Ձայնէդ ամէն մէկ կաթիլ՝ տրտմութիւններ ֆակելէն
Հեռու–մօսիկ անցեալիդ բաւիղներուև ընդմէջէն,
Կու գայ թաղուիլ սա ներկայ հոգիներուև մէջ աւեր···:

Ըսէ՛, ըսէ՛, դարձընե՞ս պիտի նորէն ինծի դուև
Հին ֆաղցրութիւնն իմ սրտիև···, կարօտ այնֆան որ ունի:
Ու մանաւանդ դարձընե՞ս պիտի հըպարտ իմ հոգւոյն
Ինչ որ երէկն էր՝ շըֆե՛ղ, յաւերժադէ՛մ, կորովի՛···:

Մայրավանի զանգա՛կ հին, գիտնա՛ս, ինչպէ՛ս կը կոտտայ
Սի՛րտըս՝ ձայնիդ դէմ հիմա···:

ՆՈՃԻ

Վանի բակին, մեկուսի, նոճի մըն է անիկա·
Երիտասարդ ու տժգոյն, ըսես դեռ նոր աբեղայ·
Մինչ ուրիշներ՝ ֆիչ անդին, բացուած ծիծա՛ղ՝ գորշ ու լայն,
Պարա՛րտ՝ բոլորըն իրենց, հողի՛ն տըւած միշտ բերան···:

Հպարտ՝ խորն իր մենութեան, արեւին հետ ու ցուրտին
Ֆիչ–ֆիչ հասակ ան կու տայ վանի շուրին մէջ՝ դեղի՛ն:
Ձայն կը դիտեմ ես յանախ, ու կ'ըմբռնեմ ալ կարծես·
– Կապո՛յտ, անձրե՛ւ, ֆաղցրութի՛ւն, գիշեր, թախիծ, սէ՛ր այնպէս:

Հովին խստանին լոյսե՛ր երբոր թափէ վերերէն,
Գիշերին մէջ, մեղմ ու խոր երգեր զայն մերթ կը ցօղեն···:
Ցա՞ւ մը թաֆուն թէ աղօթ՝ փաթթեր մարմինն են անոր···:

Մինչ շուրջն իրեն մո՛ւթ ծառեր գլուխ կը ճօճեն դառնօրօր,
Վանի բակին, մեկուսի, ըսես դեռ նոր աբեղայ,
Ցաւերժութիւնը գրկած, լուռ, երազին ան կ'երթայ···:

Արդար կը գտնեմ որ մասնաւոր դասախօսութիւն մը կազմակերպուէր Հայց· Առաքելական Եկեղեցւոյ կորուստի մասին, մասնաւորաբար չեչտելու համար այն անմարդկայնութիւնը զոր Թըրքնամին երեւան բերաւ, եւ չեչտելու համար Թրքնամիին դիւացին ծրագիրը որ էր ամբողջ ազգ մը ոչնչացնել ոչ միայն ֆիզիքապէս, այլ նաեւ իր ամբողջ մշակոյթով:

Դահճապետ Թալէաթ Փաշան ամէնէն աւելի վտանգաւորը կը նկատէր հայ հոգեւորականութիւնը: Իր ստորագասներուն կը պարտադրէր ամենադաժան միջոցներով ոչնչացնել հոգեւոր–

ականութիւնը: Եւ Հալէպի Նահանգապետին տրուած ծածկագիրը հրամանագրի մը մէջ կ'ըսէ. «Զնայած այն բանին որ ամէնէն առաջ անհրաժեշտ է ոչնչացնել հայ հոգեւորականութիւնը, մեզ տեղեկութիւն է հասեր որ առանձին հոգեւոր անձեր ղրկուած են կասկածելի վայրեր, ինչպէս Սուրիա եւ Երուսաղէմ: Նման զիջումներ անները լի զանցառութիւններ են: Աքսորը անոնց համար պէտք է նշանակէ միայն ոչնչացում: Խորհուրդ կու տամ ատոր համաձայն գործել:»

Իսկ Իթթիհատին համար, պատերազմը յարմարագոյն առիթն էր որպէսզի նաեւ հայ հոգեւոր հեղինակութիւնը ջնջէր: Եւ Պատրիարքարանի հեղինակութիւնը կը բեկանուի 1916 Յուլիս 19–ին լոյս տեսած որոշումնագրով մը, որով լուծուած կը հռչակուէր 1863ի Ազգային Սահմանադրութիւնը: Ի՞նչ կարիք կար հոգեւոր կեդրոններու: Մէկը՝ Պոլիս, մէկը՝ Երուսաղէմ, եւ կաթողիկոսութիւն մըն ալ Կիլիկիոյ մէջ: Այս բոլոր հաստատութիւնները նոյն որոշմնագրով կը վերածուէին հոգեւոր միակ իշխանութեան մը, կեդրոնացած Սահակ Կաթողիկոսի անձին մէջ, եւ ողջ մնացած քանի մը հոգեւորականներէ բաղկացած Սինոդ մըն ալ անոր կողքին:

ՇԷՆՔ ՈՒ ԿԱԼՈՒԱԾ

Եթէ սկսինք մանրամասնել կորուստները Հայ Եկեղեցւոյ, կրնանք սկսիլ չէնքերէն եւ կալուածներէն: Եւ եթէ մտածենք որ Հայաստան աշխարհի բոնագրաւուած հողերուն ամէն մէկ դիւղին մէջ եկեղեցի մը գոյութիւն ունէր, եւ իւրաքանչիւրին հետ նուազագոյն մէկ հոգեւորական, եւ այդ եկեղեցին ինքզինքը կը կառավարէր նիւթապէս ժողովուրդին նուէրներով կամ հարուստ մարդոց նուիրած կալուածներով, այն ատեն մօտաւոր պատկերը կ'ունենանք այն կորուստին, այն հսկայ կորուստին, որ Հայ եկեղեցիները եղաւ իբրեւ չէնք ու կալուած:

ՍՐԲԱՏԵՂԻՆԵՐ

Կորուստի երկրորդ երես մըն ալ՝ սրբատեղիները, եկեղեցիները եւ վանքերը:

Թիւ մը ներկայացուած է պատմաբաններու կողմէ: Երկու հազար եւ չիսուն վանքեր եւ եկեղեցիներ կործանած ու քանդուած են: Եւ կորնցուցած ենք նաեւ այն սրբատեղիները որոնք մեր ժողովուրդին համար մասնաւոր նշանակութիւն ունէին, հաւատքի աղբիւր էին: Մշոյ Սուրբ Կարապետը, Կեսարիոյ Սուրբ Կարապետը, Սեբաստիոյ մէջ Ս. Նշան Վանքը, Աղբակի մէջ Թադէոս Առաքեալի Դամբանը, Նարեկայ վանքը, Վարագայ վանքը, եւ



Կոմիտաս Վարդապետ 1867–1915–1935



Գրիգոր Ապուղամրենցի եկեղեցին, ժ դար



Ախթամարի վանքը, 915–921

ուրիշ սրբատեղիները, որոնք նուիրական վայրեր էին Հայ ժողովուրդի համար:

ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Կորուստի աւելի կոտտացող ցաւ մը մեր արուեստներէն կու գայ: Հայ Եկեղեցին երբ իր տաճարները կը կոթսնցնէ, հարուածը կ'իջնէ իր արուեստի դլուխ գործոցներուն:

Քանի մը լուսանկարները որոնք ցոյց տրուեցան պաստառի վրայ, չատ քիչ գաղափար կրնան տալ մեր ցաւին խորութեան մասին:

Սիրարփի Տէր Ներսէսեանի ուսումնասիրութիւնը եղող գեղատիպ այս դիրքը՝ Ախթամար, լուսանկարներու բաժին մը ունի: Մանրամասնութեամբ ներկայացուած է ամէն մէկ կողմը եւ պատը այդ տաճարին: Հրաչալիքներու հաւաքածոյ: Քանդակներու խօսուն ցուցահանդէս: Սուրբ Գիրքէն առնուած չարայար պատմութիւններ, անձեր ու դէպքեր, Ադամ եւ Եւայէն սկսեալ, քանդակուած են տաճարին արտաքին պատերուն վրայ, պսակդօտիի պէս զայն գեղազարդելով, եւ կարծես առնական կորովի ու յաւերժական չնորհի ակօսներու մէջէն զայն կենսաւորելով, ճոխացնելով: Եւ ասիկա Հայ հոգիի արտայայտութիւնն է: Հայ ճարտարապետութեան գեղեցկութիւնն ու գլուխ գործոցն է, բազմաթիւ ուրիշ աւերակներու չարքին: Հազարաւոր նման հրաշալիքներ վկաներն ու կոտտանքն են Հայ Եկեղեցիի ցաւին:

Աւանք վկաներն են ոչ միայն Հայ ճարտարապետութեան, այլ նաեւ Հայ քանդակագործութեան:

ՀԱՅ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Կ'ըսուի թէ Հայ ժողովուրդը մասնայատուկ կերպով Հայ քանդակագործութեան արուեստը չէ մշակած: Քանդակագործութիւնը ուրիշ ժողովուրդներու մէջ, Յոյներու եւ Հռովմայեցւոց մօտ մասնաւորաբար, զարգացած է իբրեւ առանձին արուեստ: Քանդակագործները անպայման ճարտարապետներ չէին: Եւ ոչ ալ՝ ճարտարապետները անպայման քանդակագործ: Եւ սակայն Հայ ճարտարապետը, որ աւելի չէ ունեցած, ըսենք, մասնաւոր կերպով եւ առանձնապէս քանդակագործութեան արուեստը մշակելու, բայց ինք իր մէջ զգացած է խլրտումը այդ չնորհին ու տաղանդին, զայն իրագործած է, ահաւասիկ, եկեղեցիին պատերուն վրայ: Մասնաւորաբար պատերուն արտաքին երեսին վրայ: Եւ այս՝ թէ՛ աչխարհիկ ընկերային մօթիֆներ գործածելով, եւ թէ կրօնական խորհրդանչական զարդարանքներ օգտագործելով:

Եւ ահա ամէն մէկ տաճար արտայայտութիւնը կը դառնայ

մէկ կողմէ Հայ ճարտարապետութեան, միւս կողմէ Հայ քանդակագործութեան: Այդ քանդակագործութիւնը կը կոչենք որմնաքանդակ: Նաեւ ունինք խաչքարերը, գերեզմաններու վրայ դրուած դամբարանները, որոնք հրաշալիքներ են, նրբաճաշակ արուեստագէտներու հոգին ցոլացնող:

Անցեալ ամիս երբ Ս. Էջմիածին կը գտնուէի, առիթ ունեցայ Երեւանէն Կիրովական երթալու: Առտուան ժամը ութին ճամբայ ելանք եւ յետ միջօրէի ժամը չորսին հազիւ հասանք Կիրովական, որ ինքնաշարժով չորս ժամուան ճանապարհ է միայն:

Ճանապարհին վրայ, առաջին գիւղաքաղաքը երբ մտանք, Աչտարակ, կարելի չէր չնշմարել կաթողիկէն Հայ Տաճարին: Ու. չէի կրնար չկանգնիլ, չմօտենալ ու չնայիլ:

Հազիւ երկու մղոն անդին, որ պզտիկ գիւղ մըն է, ուրիշ դեղեցկութիւն մը, ուրիշ եկեղեցի մը:

Եւ այսպէս չորս-հինգ հատ գեղեցիկ, տոկուն ու քարեղէն աղօթքներու վայելքէն յետոյ երբ ետ նայեցայ, անոնք կարծես կամար կամար իրարու աչք կը նետէին, երկնքի աղեղին դիմաց: Եւ Արարատէն եկող հովին ու ամպին միշտ դարձած:

Մինչեւ Կիրովական տասնըմէկ այսպիսի կոթողներու հուրը սրտիդ, եւ կառոյցին չնորհը աչքիդ չզարչ ըրած կ'անցնիս խոհուն, ինքզինքիդ ըսելով, «Ինչ գեղեցկութիւն, Աստուած իմ, ինչ չուք ու չնորհ»: Անոնցմէ ոմանք իրենց աւերակ վիճակին մէջ իսկ յուզիչ ու հրապուրիչ:

Ու մտածել որ Հայը ուր որ իր բնակութիւնն է հաստատեր, այնտեղ կանգներ է ու կառուցեր կոթողը իր հոգիի ու մտքի սլացքներուն:

Հազարներով այսպիսի կառոյցներ Արեւելեան եւ Արեւմտեան Հայաստանի լեռներն ու ձորերը վերածած են «խաչքարերու սուրբ աշխարհի»:

ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ

Արուեստի մարզին մէջ ուրիշ կորուստ մը մեր մանրանկարչութիւնն է: Մեզմէ անոնք որոնք բախտաւորութիւնը ունեցած են ձեռագիր մանրանկարներ տեսնելու, զանոնք աչքով լափելու, անոնք աւելի պիտի զգան թէ ինչ աչքի լոյս եւ ինչ հոգի դրուած են մինչեւ իսկ լուսանցքներուն մէջ՝ ձեռքով ընդօրինակուած այդ գիրքերուն, որոնց փոքրիկ ծաւալը դաշտ է զարդանկար ստեղծագործութեանց:

Ու գաղտնի՞քը, որ հարիւրաւոր տարիներ անցնելէ յետոյ անոնք տակաւին թարմ կ'երեւան, այսօր պաստառին դրուած նկարի ու գոյնի նման, հազիւ թէ կրնանք բացատրել: Գծագրողները, որոնք գրիչ կը կոչուէին, թերեւս իրենք միայն գիտէին:


Մանրանկարչութեան այս կորուստը, Հայ ազգին համար ան-



Ս. Բարբոդիմէոս վանքը



Անիի Մայր Տաճարը, 989



1965 Նահատակաց ցուցարձան (Ս. Էջմիածին)

կասկած որ աւելի մեծ կորուստ է: Երբ զայն բաղդատենք եւրոպական ժողովուրդներու մանրանկարչութեանց հետ, մերինը թէ՛ իր պատմականութեամբ արժէքաւոր եւ թէ իր արտայայտչութեամբ աւելի եզական կը մնայ:

Մանրանկարչութեան հետ, ուրեմն, ունեցած ենք կորուստը հազարաւոր ձեռագիրներու:

Ձեղմէ անոնք որոնք առիթ ունեցան «էջմիածին» ամսագրի Ապրիլեան եղեռնի նուիրուած բացառիկ թիւը տեսնելու, եւ կարդացին Մելիք Օհանջանեանի յօդուածը, զգացին թէ ինչ ըսել է դուրգուրալ թանկագին ժառանգի մը վրայ: Պերլինի մէջ, ձեռագիրներու մասնագէտի մը մարդ մը կը ներկայանայ չորս հինգ հայերէն ձեռագիրներով, որպէս զի մասնագէտը գումարով մը գնահատէ զանոնք, քանի որ գնող վաճառականը մասնագէտին ղրկած էր զինք:

Գերմանացի մասնագէտը կը նայի ձեռագիրներուն եւ մարդուն, եւ կ'ըսէ. «Դուն Հայ ես եւ կ'ուզես այս ձեռագիրները ծախե՞լ: Ինչո՞ւ: Այս թանկագին ժառանգը պէտք է տունիդ մէջ պահես եւ զաւակէ զաւակ փոխանցես:» Մարդը կ'ըսէ. «Ես Հայ չեմ, ես Թուրք եմ:» Ու կը պատմէ թէ ինչպէս Վանի կողմերը Վանք մը կողոպտած ժամանակ բազմաթիւ նման գիրքեր այրելէ յետոյ, այդ քանի մը գիրքերն ալ ինք հետը վերցուցեր տարեր է: Եւ հիմա, իր ընտանիքին համար Եւրոպայէն նուէրներ կ'ուզէ գնել զանոնք ծախելով:

Մասնագէտը՝ զայրացած, լուտանքներ կը թափէ աւազակին դլխուն, ձեռագիրները առնելով եւ զայն իր տունէն վռնտելով, որովհետեւ «այս ձեռագիրները Հայ ժողովուրդին կը պատկանին. եւ հայուն իրաւունքն է ասոնց տէր ըլլալ:» Ու զանոնք կը փոխանցէ Վիեննա՝ Մխիթարեան Մատենադարանին:

Ահա թէ ինչո՞ւ, անոնք որոնք բախտաւորութիւնն ունեցած են ձեռք ղպցնելու կամ աչքով նայելու դարերէն եկող մանրանկար արուեստի այս նմոյշներուն, աւելի խորունկ կրնան զգալ այրուցքը մոխիրներուն, հազարաւոր նման ձեռագիրներու հրկիզումէն մնացորդ:

ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ

Արուեստի մարզին մէջ ունեցած իր կորուստներէն զատ, Հայ Եկեղեցին ունեցաւ նաեւ հոգեւորականներու կորուստ: Հայ Հովիւներու կորուստ: Զորս հազար հոգեւորականներ զոհ գացած են սպանդին: Տակաւին չհաշուելով Հայ Կաթոլիկ եւ Հայ Բողոքական համայնքներուն տուած զոհերը: Հօտ ու հովիւ միասին նկատի առնուած, Հայ Եկեղեցին ունեցած է երկու միլիոն հայորդիներու կորուստ, իրենց չորս հազար հոգեւոր մշակներով:

Իսկ մահացումի կերպե՞րը: Ահաւոր ու անմարդկային պատմութիւններ են անոնք, քաղաքակիրթ մարդկութիւնը խարանող:

Անոնք որոնք գնդակահարուած են, թերեւս ամենէն երջանիկները զգացած են իրենք զիրենք: Իսկ անոնք որոնց մորթը հանուած է, որոնց եղունգները քաչուած են ու մատները կտրատուած, եւ անասելի կերպով անդամահատուած՝ նախ քան մահանալը, այդ ալ ուրիշ զարհուրանք:

Խոսրով Եպիսկոպոս Բեհրիկեան մը, Կեսարիոյ Առաջնորդ, 1914ին էջմիածինէն դարձին, 101 տարուան բանտարկութեան կը դատապարտուի որովհետեւ Թշնամի երկրէ մը կու գար եւ Թշնամի կ'ամբաստանուի Հայրենիքին: Ձայն կը սպաննեն դէպի Տիգրանակերտ ճամբուն վրայ, ձեռքերը կապած եւ ոչխարի պէս մորթելով:

Մկրտիչ Վրդ. Ջղլատեան մը, 1915 Մայիսին, Տիգրանակերտի մէջ, նախատինքով կը պատցնեն փողոցներէն, եւ մզկիթի բակին մէջ կը տանին, կառավարութեան տունին դիմաց, եւ վրան քարիւղ թափելով կ'այրեն:

Վարդան Ծ. Վրդ. Յակոբեան մը, Մուշի Ս. Կարապետ Վանքին Վանահայրը, բոպիկ ոտքերով կը տարագրեն եւ նաւթով կ'այրեն:

ՀԱՅ ԴՊՐԱՆՈՑՆԵՐ

Հոգեւորականներու այս կորուստէն զատ, Հայ Եկեղեցին ունեցած է կորուստը լոյսի կեդրոն, գիտութեան կեդրոն իր դպրոցներուն, իր դպրանոցներուն:

Արմաշու Դպրեվանքը այն կեդրոնն էր ուր պիտի ուսանէին ու մեծանային ապագայ հայ հոգեւորականները: Այս դպրեվանքը որ 1889ին Խորէն Աչըգեան Պատրիարքին օրով հիմնուած էր եւ Օրմանեան Մաղաքիա Եպիսկոպոսը իրեն առաջին վանահայրը ունեցած էր, 25 տարիներու ընթացքին (1889–1914) 34 վեղարաւոր հոգեւորականներ ընծայած էր ազգին: Եւ անոնցմէ չատերը առաջնորդներ էին, վանահայրեր էին, գաւառներուն եւ ծխական եկեղեցիներուն մէջ: Անոնք եւս տարագրութեան ճամբան բռնած, իրենց հօտին հետ դէպի սպանդ տարուեցան եւ միասին նահատակուեցան:

Դպրանոցներու հետ կործանեցան ու փակուեցան ուսումի եւ քաղաքակրթութեան «լուսոյ վառարան», «տաճար հրաշագործ, վսեմ ճուլարան» բոլոր դպրոցներն ու վարժարանները:

Թշնամին հետեւաբար, դպրոցներու այս կորուստը պատճառելով, տեսակ մը խորխորատ, անդունդ բացաւ 1914ի սերունդին եւ անկէ յետոյ գալիք հայ հոգեւորականութեան միջեւ: Անջրպետ մը՝ անկամուրջ երկու սերունդներու միջեւ: Որովհետեւ, Երուսաղէմը, որ 1921 Թուականէն սկսեալ իր ժառանգաւորաց վարժարանի միջոցաւ կերպով մը չարունակողը դարձաւ Արմաշու Դպրեվանքին, երկու հոգեւորականներ միայն կրցաւ տալ մինչեւ 1930 Թուականը: Անբաւարար՝ կամրջելու համար 1915էն մինչեւ

1930 բացուած անդունդը, եւ օղակելու համար հոգեւոր դասու չարայար չղթան: Ասիկա կը նշանակէ նաեւ անդունդ մը ժողովուրդին, հօտին եւ հովիւին միջեւ, անոնց հոգեւոր կեանքին եւ անոնց հոգեւոր սնունդին մատակարարման տեսակէտէն:

ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Դպրանոցներու կորուստը բնականաբար կը նշանակէ նաեւ կորուստ Հայ Հոգեւոր գրականութեան:

Հայ հոգեւորականը, այն որ մտաւորական շնորհներ ունի, նոյն ատեն հայ հոգեւոր գրականութեան սպասաւորն է: Եւ 1915ի այդ ջարդը անուղղակիօրէն կասումն էր, դադար առնելն էր հայ հոգեւոր գրականութեան եւ մշակոյթին:

Մեծագոյն կորուստը սակայն, որ կրնամ մատնանշել Հայ Եկեղեցիին համար, մէկ անուն մըն է – Կոմիտաս Վարդապետ: Բոլոր չէնքերը կարելի է թերեւս նորէն կառուցանել, բոլոր կորսուած հոգեւորականներու տեղ թերեւս կարելի է նորեր ապահովել, բոլոր կործանած դպրոցներու փոխարէն թերեւս աւելի գեղեցիկները եւ աւելի լաւերը կարելի է կանգնել, բայց Կոմիտաս մը կարելի չէ չինել: Կոմիտաս մը չի պատրաստուիր: Կարելի չէ ապսպրել: Ան միայն կը ծնի: Եւ ան կը ծնի դարերու խորքերէն: Հայ Եկեղեցին իր երաժշտութեան գեղեցկութիւնը կը վերագտնէր այս հանճարին միջոցաւ: Մէկ հանճար, որ ով գիտէ քանի դարեր անդամ մը միայն երեւան կու գայ: Այդ մէկ հանճարին խորտակումը բաւ է որ անարդութեան սիւնին գամէ անմարդկային որեւէ մէկ արարք, բայց մանաւանդ ահաւոր մէկ ծրագիր՝ ամբողջ ժողովուրդ մը անճիտելու:

Եւ այս բոլորը, այս բոլոր կորուստները, այսպէս ըսենք՝ չէնքի եւ անհատի, կը դառնան կորուստը ամբողջ ժողովուրդի մը:

Երբոր ժողովուրդ մը կը մնայ անհովիւ, կը նշանակէ որ այդ ժողովուրդը կը մնայ զրկուած իր հոգեւոր առաջնորդէն, նաեւ անգէտ ու անուս, եւ անիրազեկ իր հոգեւոր կարիքներուն: Ուսման պակասը ժողովուրդին մէջ հետեւաբար պատճառ կը դառնայ հետաքրքրութեան պակասին: Ի վերջոյ, չատ բնական բան է, մենք սիրով կ'երթանք այն տեղերը ուր գիտենք թէ ինչ կրնանք ակնկալել, ուրկէ գիտենք թէ ինչ կրնանք ստանալ: Անծանօթ տեղ մը միշտ վախով եւ վարանքով կ'երթանք: Ժողովուրդ մը որ իր հոգեւոր գրականութեան ծանօթ է, իր հոգեւոր երաժշտութեան ծանօթ է, իր աւանդութիւններուն ծանօթ է, եւ գիտէ աղբիւրը իր հաւատքին, այդ ժողովուրդը ուրախութեամբ կը լեցնէ իր եկեղեցիները: Եւ եթէ ուսումնական տեսակէտէն մեր անուս մամիկները որոնք գրել կարդալ անգամ չեն գիտեր, եկեղեցիէն սակայն դուրս չեն ելլեր, պատճառը այն է որ իրենք չատ լաւ գի-

տեն, գոց գիտեն, ոչ միայն աղօթքներն ու երգերը, բայց մանաւանդ հոգին՝ այդ բառերուն ու ձայներուն մէջէն արտայայտուած: Մինչեւ իսկ այն բառերուն՝ որոնք թերեւս մխիթով անհասանելի եւ դժուարըմբռնելի են:

Այս պատճառով, Թշնամիին տուած կորուստը Հայ Եկեղեցիին ահաւոր է. ան ամբողջ ժողովուրդ մը գլորեց դէպի եղերքը հոգեւոր կորստեան անդունդին: Ողջմնացորդներն անգամ կորեց, խորթացուց իրենց հոգեւոր մօրմէն: Եւ քանի որ հովիւին պակասը կայ, հետեւաբար եւ մտերմութեան պակասը կայ, խօսակցութեան պակասը կայ: Երբ ծխական մը իր հովիւին երեսը չի տեսներ, երբ ծխական մը իր հովիւին հետ խօսակցութեան չի նստիր, անիկա հազիւ թէ յիշէ իր պատկանիլը աւելի մեծ ընտանիքի մը, հազիւ թէ յիշէ այսինչ փողոցին վրայ գտնուող եկեղեցի–չէնքը՝ ուր մտադրէ երթալ: Ընդհակառակն, սովորական բացատրութեամբ մը պիտի ըսէ, «Ի՞նչ պիտի ընեմ հոն երթամ, ահագին ճամբայ կրեմ: Երթամ այնտեղ ի՞նչ պիտի ընեմ: Արդէն հետաքրքրութիւն չունիմ: Եւ քանի որ ծանօթ չունիմ, ինչո՞ւ երթամ»:

Շատ յատկանշական են այս արտայայտութիւնները, իրրեւ դիտողութիւններ եւ դիտաւորութիւններ:

Կը յիշեմ թէ հովուական պաշտօնիս բերումով հանդիպած եմ «ծանօթ չունեցող» հայ տղոց եւ աղջիկներու: Որոնք կը վարանին, կ'ամչնան իրենց բնակած քաղաքին հայ եկեղեցին երթալու, որովհետեւ օտարական կը զգան իրենք զիրենք: Մեղադրանքի մեծ բաժին մը կ'երթայ անշուշտ անոնց ծնողներուն անտարբերութեան, տկարութեան: Եւ վարանոտ այդ հայերուն առաջին ապաւէնը հովիւին մտերմութիւնն է: Այդ պատճառաւ, անոնց կու տայի առաջին ժամադրութիւնը եկեղեցւոյ սրահին մէջ հանդիպելու, այնպիսի իրիկուն մը երբ ենթակային տարիքին եւ հետաքրքրութեան համաձայն եկեղեցական կազմակերպութիւն մը հաւաքոյթ պիտի ունենար: Եւ բնականաբար հովիւին յաջորդ գործը պիտի ըլլար պատրաստել միւս անդամները, որպէսզի, «ծանօթ չունեցող» հայը երբ գար իրեն ծանօթ եղող հովիւը տեսնելու, կարենային զայն իրենց մէջ առնել եւ իրենցմէ մէկը ընել:

Այս մտերմութեան, խօսակցութեան պակասը հովիւին եւ իր ծխականին՝ հօտին միջեւ, զգալի ու կարեւոր կորուստներէն մէկն է: Տարիներով, տարիներով հայ եկեղեցականի երես չտեսնող հայեր կան այսօր, Ամերիկայի մէջ: Պարագան տարբեր չէ հաւանաբար ուրիշ երկիրներու համար եւս:

Ի՞նչպէս Հայ եկեղեցին պիտի կարենայ իր պաշտօնը կատարել, եթէ ոչ՝ հովիւներով միայն: Հովիւներ՝ որոնք բաւարար ուժ ունենան երթալու հօտին ամէն մէկ անդամին, որ իրենց չրջանակին մէջ կը գտնուի: Հովիւներ՝ որոնք առաջնորդող եւ գլուխ ըլլան անհատ հոգիներու միախառնումէն յառաջ եկած բարդ ու գործարանաւոր մարմինին, հօտին ու համայնքին:

ՀԱՅՑ· ԵԿԵՂԵՑԻՈՑ ԿՈՉՈՒՄԸ

Այս բոլոր վնասները թշնամին տուաւ: Իր գործն էր ատիկա: Եւ թերեւս իր գործը լաւ ըրաւ: Հարցը այն է թէ մե՛նք ինչ կ'ը-նենք: Մենք ի՛նչ պէտք է ընենք:

Հայաստանեայց եկեղեցին եթէ Հայ ազգին մէջ գործող եկե-ղեցին է, ինչ որ է եւ աւելին է, ուրեմն Հայց· եկեղեցին պարտա-կանութիւն ունի այսօր ապրող չորս միլիոն հայերը փրկելու: Հայց· եկեղեցին պարտականութիւն ունի չորս միլիոն հայ ան-հատները առանձին առանձին գտնելու, տեսնելու եւ փրկելու: Առանձին առանձին: Այս է եկեղեցիին պաշտօնը եւ գործը: Եկե-ղեցիին անմիջական նպատակը կազմակերպութիւններ մէջտեղ բերել չէ: Եկեղեցիին գերագոյն նպատակը կազմակերպութիւն-ներու միջոցաւ ձեռնարկներ տալ չէ: Այդ բոլորը Եկեղեցւոյ բուն նպատակին իրագործման ճամբուն վրայ միջոցներ են: Եւ թերեւս անհրաժեշտ միջոցներ:

Եկեղեցիին կոչումն է նախ անհատական, անձնական փրկու-թիւն ապահովել մարդուն: Մնացեալը հետեւանքն ու արդիւնքն են այս նպատակին իրագործման: Եւ հետեւաբար՝ կը կառուցուին տաճարներ, ճարտարապետական կոթողներ, կը մշակուի գը-րականութիւն, կը ստեղծագործուին հոգեզմայլ երգեր ու երա-ժըշտութիւն, կը կազմակերպուին ուսումնարաններ ու դպրոց-ներ, կը համակարգուին եկեղեցւոյ մարմինին մէջ գործող միա-ւորներ, կազմակերպութիւններ, իշխանութիւններ իրենց իրա-ւասութեան սահմաններով:

Չորս միլիոն հայերու համար նուազագոյն չորս հազար հայ հոգեւորականներու պէտք ունինք այսօր, եթէ ամէն մէկ հոգե-ւորական կարենայ հազար հայ անհատներու մտերմութիւնը չա-հիլ, անոնց հետ խօսակցութեան նստիլ: Մինչդեռ այսօր հազիւ թէ չորս հարիւր հոգեւորականներ կարենանք համրել ամբողջ աշ-խարհի մէջ:

Չորս հարիւր հայ հոգեւորականներով կարելի չէ աշխարհի չորս ծագերուն ցրուած չորս միլիոն հայերու փրկութիւնը ապա-հովել:

Անոր համար, այսօր, երկու միլիոն նահատակներու յիս-նամեակին առիթով եթէ մենք իրապէս մտահոգութիւն ունինք, եթէ իսկապէս ազգասէր ենք, եթէ իրապէս եկեղեցասէր ենք, պէտք է մտածենք մեր ընելիքին մասին, աւելի քան մեր ողբի ճամ-բով մեր խօսելիքին մասին: Որովհետեւ, առանց հակասութեան մէջ բռնուելու մտավախութեան, գիտենք թէ Հայց· Եկեղեցւոյ գործին դաշտը չորս միլիոն հայերը չեն միայն:

Ներկայ աշխարհի մէջ չես կրնար կղզիացած ապրիլ: Չես կրնար դուն քեզի համար միայն, դուն քեզի հետ միայն ապրիլ: Պարտաւոր ես դուրդ բաց պահել: Պարտաւոր ես չփման մէջ գալ ոչ-հայ հաւաքականութեանց հետ: Թէ՛ քրիստոնեայ եւ թէ ոչ-

քրիստոնեայ մարդերու հետ: Եւ հետեւաբար ընդհանրական քրիստոնէական եկեղեցիներու կեանքին ու չարժումներուն մէջ պիտի պարտաւորուի մաս առնել Հայ Եկեղեցին: Բայց իրողութիւն է որ կը վարանինք մաս առնելու, որովհետեւ նախ մենք պատրաստ չենք: Կարիքը ունինք պատրաստուած եկեղեցականներու, հոգեւոր եւ իմացական չնորհներով ճոխացած մշակներու, որոնք կարենան իրենց պատեհանէն դուրս ելլել եւ դէմ յանդիման կանգնիլ թէ՛ ոչ-հայ քրիստոնեայ եղբայրներու հետ եւ թէ «աշխարհի որդիներուն» հետ, իբրեւ առաքեալներ Քրիստոսի պատգամին:

Այս վարանումը մեզ միշտ ետ կը պահէ: Մեզ մեր պատեհանին մէջ քաշուիլ կը ստիպէ: Եւ պատեհան ունեցող կենդանի մը իր պատեհանին չափով միայն կը մեծնայ:

Հայց. Եկեղեցին հիմնուած է հաւատքի այնպիսի վէմի մը վրայ զոր պիտի չկարենան «դրունք դժոխոց» յաղթահարել: Ասոր վկայ է իր պատմութիւնը: Պատմութիւն մը՝ «վասն Քրիստոսի, վասն Հայրենեաց» հերոսներով եւ հերոսութիւններով վկայագրուած:

Հայց. Եկեղեցին այնպիսի արմատներ ունի հոգիներու խորութեանց մէջ թափանցած, որ այդ արմատներէն ընձիւղուած ծառը կարող է իր թեւերը տարածել ի սփիւռս աշխարհի ցրուած իր բոլոր զաւակները փրկելու: Կարող է բարձրանալ բարձրուղէշ մինչեւ երկինք, դէպի ուր տանող «գաղտնի ճամբայ մը ունի»:

Մենք չատ անգամ կը խօսինք մեր անցեալի փառքերէն: Պէտք է զգոյշ ըլլանք որ անցեալի փառքը չկարծրանայ իբրեւ կեղեւ՝ մեր մարմնին աճումը կասեցնող: Կենսալիր էակներու աճումին օրէնքը անժխտելի է: Ուստի մեր անցեալին փառքերը պէտք է գործածենք մեր ապագայ աճումը ապահովելու համար միայն:

Այս բոլոր հաւաքոյթները, հանդիպումները, ճառախօսութիւնները, իմաստ կ'ունենան երբոր ծառայեն այսպիսի իրաւ, իրական, անմիջական նպատակներ իրագործելու:

Վերջացնելու համար, դարձեալ պիտի ուզեմ երկու քերթուածներ կարդալ: Անոնք Հայց. Եկեղեցւոյ կորուստներուն ատաղումին դիմաց թերեւս յոյս եւ անձկութեամբ լեցուն ակնկալութիւն կ'արտայայտեն: Անոնցմէ մէկը նուիրուած է Նանսէնին, Նորվեկիացի այն նաւորդին, որուն անունով բազմաթիւ հայեր անցագիր ունեցած են: Նանսենեան անցագիրով տարագիր հայեր ազատագրուեր են երկրէ երկիր: Եւ այս օտարականը հայ ազգը ճանչցաւ ու սիրեց, եւ անոր սիրոյն՝ ունեցաւ քաջութիւնը դիմելու Միացեալ Ազգերու ժողովին, այդ ազգին բեկորները փրկանաւորելու համար: Հաստատեց դրութիւն մը որ պետութիւն մըն է պետութեանց մէջ, քանի որ ոչ մէկ ուրիշ պետութիւն կը համարձակէր իր անունով անցագիր տալ հայերուն:

Քերթուածներէն մէկը կարելի է վերնագրել՝ «Վանքի Բակին».

Վանիի բակին, մեկուսի, դեռ կը սպասէ անիկա.
Նոճի մըն էր՝ զուսպ, տժգոյն, ըսես դեռ նոր աբեղայ,
Երբ կ'երազէր, կ'աղօթէր, անձրեւին հետ ու լուսնին,
Որ լեռնա՛ր բակն համերգով··· : Սի՛րտն իր կ'ուզէր տալ նոճիին:
Վանիի բակին, մեկուսի, դեռ կը սպասէ համերգին:

Ցովն իր՝ ուրիշ նոճիներ խանձե՛ր, կրճե՛ր, շրլմորե՛ր.
Իրենց գլխուն անխընայ կրրակ թափեր՝ չար հովեր.
Ու վանիին հին երգերուն լուսնացօղ մեղրն փեթակէն
Կը վատնուի, կը չորնայ··· նոճին սեւ–լոյս է հագեր.
Ցովն իր՝ ուրիշ նոճիներ, ողբի կոչնակ կը թակեն:

Ըսես դեռ նոր աբեղայ, նոճի մըն էր պարմանի,
Ու կեանքն իմաստ, խորհուրդ, համ կարծես կ'առնէր շէն–մահէն
Որ իրն էր հոն, ժպտուն–աչք վանիի սուրբերը ամէն
Բացխփէին երբ խունկէն, շարականէն, աղօթքէն.
Կեանքը իմաստ, խորհուրդ, համ կ'առնէր կարծես մահէն շէն:

Ու կ'աղօթէ տակաւին, ըսես դեռ նոր աբեղայ,
Որ շունչ մը նոր, շունչ մը հին, նոճիներուն վրայ տեղայ,
Որ բակն ամբողջ ծածկըւի վերընձիւղուած նոճերով,
Միւռոնացօղ զանգակէն որ սարսըռան հոգեխոռով,
՛ւ անոնց ճակտին Աստծոյ մատն յաւերժօրէն որ դրոշայ··· :

ՆԱՆՍԷՆ

Նա՛նսէն, եկայ քնավայրիդ ես ուխտաւոր ու ճամբորդ,
Հոգիիս մէջ հազար աչքեր, օրհնող ձեռքեր իմ ազգին
Զաւակներուն, որոնք ջուրի փոխան արիւն ըմպեցին,
Որոնց ետեւն՝ ըսփիւռք–ցիդեհ, հայրենիքին են կարօտ:

Գիշերն իջեր էր կանաչին, պարտէզներուն ու տունին,
Ուր տխնեցաւ միտքդ բեղուն, մարմինըդ ժիր, մեծ նաւորդ:
Մութը ի՛նչ փոյթ· ազգիս համար ազատարար մ'Էիր դուն.
Դուն Աստուծոյ հըրաշքն էիր – պետութեանց մէջ պետութիւն:

Քո՛ւ անուանով հայրն իմ արի, մայրն իմ բարի, իմ ազգին
Սովալըլուկ զաւկըներուն հետ բիւրաւոր խալեցին
Արեան ճամբէն դէպի օտար բայց հիւրընկալ կայք ու տուն··· :

Հոգիիս մէջ ամբողջ սարսուռն իմ նահատակ հոյրերուն,
Եկայ անոնց արնաերախտ սրտին յոյզով բախելու
Թակը դուռիդ, եւ ըսելու թէ՝ կ'ապրի՛նք դեռ··· : Եւ հըլա՛ւ՝

Մեզ կըռանող, առհասական, լուսացնցուղ ձայներուն,
Հայերս այցի գաճիճ պիտի բեզ, եւ բեզ բունիդ մէջ արթո՛ւն
Պիտի պահենիճ, անմահութեան ովկեանները զերթ նաւորդ:

Նա՛նսէն, ցեղիս մութ շբերթին լոյս-էջն ես դուն կենսայորդ:

ՖՐԷՏՐՈՖ ՆԱՆՍԷՆ

Ֆրէտրոֆ Նանսէն ծնած է 1861 Հոկտ. 10ին Նորվեկիոյ մէջ: Մեծ ովկիանոսագէտ եւ բեւեռախոյզ, ան 1888ին հետախուզեց հարաւային կրէօնլանտը, իսկ 1898էն 1896 հիւսիսային բեւեռը: Իր պլուխ գործոյն է «Գիշերուան Սառոյցին մէջ» աշխատութիւնը: 1922ին ան ստացաւ Նոպելեան Խաղաղութեան Մրցանակը:

«Նանսէն մեծ էր որպէս բեւեռախոյզ, աւելի մեծ էր որպէս գիտնական, ալ աւելի մեծ էր որպէս մարդ» ըսած է նշանաւոր ճամբորդ ու երկրաբան Ֆ. Սվերդրոպը:

Որպէս մարդասէր Նանսէն ղօրավիգ եղաւ բոլոր ժողովուրդներու դըժբախտներուն եւ մասնաւորաբար հայերուն: 1915ին Թրքական ոճրապարտ ցեղասպանութենէն կոտորուած մէկուկէս միլիոն հայ զոհերուն յայտնաբերութենէն ետք, Նանսէն լծուեցաւ, Թրքական կարգերէն եւ աքսորի ճամբաներէն վերապրած ու իրենց հայրենիքէն բոնի վտարուած ու Եւրոպայի ափերը հասած Թրքահայերու օգնութեան գործին: Ան իր սեփական միջոցներով աշխատեցաւ Եւրոպայի հասարակական կարծիքը սիրաչահիլ ի նպաստ հայերուն, որոնց ճնշման տակ, Ազգերու Դաշնակցութիւնը ստիպուեցաւ «զբաղիլ» հայ գաղթականներու վիճակով: Եւ 1925ին, այդ հարցը ուսումնասիրելու համար Նանսէն մասնաւոր յանձնախումբով մը գնաց Հայաստան: Վերադարձին, ան Ազգերու Դաշնակցութեան յայտարարեց՝ «Միակ վայրը, ուր ներկայիս կարելի է տեղաւորել ընչազուրկ հայ գաղթականները Խորհրդային Հայաստանն է»:

«Նանսէնեան անցագիր» անունով, «անհայրենիք» ժողովուրդներուն համար, միջազգային արժէք ունեցող փաստաթուղթ մը հիմնուեցաւ զոր տասկաւին ափիւռքի չատ մը հայեր կը կրեն որպէս ինքնութեան թուղթ:

1927ին Նանսէն հրատարակեց «Հայաստան եւ Մերձաւոր Արեւելք» դիրքը: 1928ին ան շրջագայեց ամբողջ Ամերիկան, պանալան դասախօսութիւններ տալով եւ հանդանակութիւններ ընելով ի նպաստ հայերուն: Ան խորապէս ուսումնասիրեց հայոց պատմութիւնը, հայոց կրած տառապանքները եւ ամբողջութեամբ սրտակից դարձաւ անոնց վիշտերուն:


Նանսէն իրապէս հայասէր էր եւ մնաց մինչեւ իր կեանքին վերջ ու աշխատեցաւ հայ ժողովուրդին համար:

Նանսէն վախճանեցաւ 1930ին: Անոր անունը յաւէտ անթառամ պիտի մընայ հայ ժողովուրդի սրտին մէջ:

ՀՈՎԻՒԻ ԵԿԵՂԵՑԻԻՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Կովկասեան պատերազմների յայտնի պատմագիր գեներալ Պոտտոն, մանրամասն խօսելով հին Հայաստանի եւ հայերի մասին, կանգ է առնում Անիի վրայ, որ ամենից գեղեցիկ կերպով է ներկայացնում Հայաստանը: Հիացած նկարագրելով այդ յիշատակարանի գեղեցկութիւնները, զինուորական գրողն է պատմում Անիի պարիսպներից դուրս գտնուող Զօրաւոր-բիլիսէի լեգենդը:

«Անիի ծաղկած ժամանակները ապրում էր սարերում մի աղքատ հովիւ, որ միայն տարին մի անգամ, Քրիստոսի Յարութեան օրը, գալիս էր քաղաք աղօթելու եւ Աստծոյ տաճարի մէջ մոմ վառելու: Վերացաւ անապատական հովիւը, եւ յոգնած ոտները վատ էին ծառայում նրան: Մի Զատիկ երեկոյ նա սովորականի պէս ճանապարհուեց դէպի փառաւոր Անին եւ ամբողջ գիշերը գնում էր լեռնային խուլ կածաններով: Գարնանային գիշերը մութ էր, լեռնային կածանները շուտ-շուտ իջնում էին անդունդների վրայ: Բազմաթիւ դէներ, որոնք այս անգամ հեռացել էին Անիից, կպան ծերուկին եւ աշխատում էին թոյլ չտալ, որ նա հասնէ առաւօտեան ժամասացութեան սկզբին: Կամ քարեր էին գցում նրա ոտների տակ, կամ դուրս էին բերում նրան ճանապարհից եւ հրում էին դէպի մի որեւիցէ անդունդ: Իր ամէն մի քայլը գոռով խլելով, անապատականը քաղաք հասաւ ուշ, երբ եկեղեցիներում արդէն երգել էին «Քրիստոս յարեաւ»: Բոլոր եկեղեցիները, որոնք յատակից մինչեւ գմբէթները ողողուած էին նրագների եւ կանթեղների լոյսերով, արդէն լեփ-լեցուն էին մարդկանցով: Անապատականը ա՛յս եկեղեցին ուզեց ներս խցկուել, ա՛յն եկեղեցին ուզեց մտնել, փորձեց միւսը, երրորդը, տասներորդը – ոչ մի տեղ ճանապարհ չեն տալիս նրան: ամէն տեղ սարսափելի նեղուածքութիւն է, իսկ ծերուհին այնքան ուժ չունի, որ ամբոխը դէսուդէն հրէ, գոռով անցք ճղէ իր համար:



Գնաց Աստուծոյ բոլոր տաճարները եւ ամէն տեղ՝ իզուր: Նա չլսեց գատկական արեւագալի ժամերգութիւնը, մոմ, ինչպէս ուխտել էր, չվառեց: Իսկ Աստծուն մի քանի խոստանալ ապագայում– արդէն մեղք է, չգիտես թէ ինչ կը բերէ վաղուայ օրը: Սաստիկ տրտմեց ծերունին: կանգնած է ճանապարհների մէջտեղ եւ լաց է լինում: ժողովուրդը դուրս է թափւում եկեղեցիներից: որը կառքով է գնում, որը ձիով, մեծամասնութիւնը ոտով է: երիտասարդները ոսկեթել բանուածքով շորեր ունեն, սիրուն աղջիկները դիպակ են հագել եւ վզնոցներ ունեն: Ամէնքը տեսնում են աղքատ հովուին, տեսնում են նրա բրձերը, սպիտակ մազերը, արտասուքները– եւ անցնում են: Արտասուքները, ալիքները, բրձերը ոչ մի սիրտ չշարժեցին: Գալիս է, վերջապէս, եպիսկոպոսը իր եկեղեցականներով եւ տես-

նելով ողբացող ծերունուն, հարցնում է նրան հաղցրութեամբ. «Ինչո՞ւ ես լալիս, ծերուկ, այս ուրախ առաւօտեան»: Պատասխանում է ծերունին. «Դառն օրերի եմ հասել, հայր. ժողովուրդը չքողեց ինձ մտնել Աստծոյ եկեղեցին»: Գաւազանը շարժելով, ասաց հոգեւոր հայրը. «Ծերունիներին պէտք է ծուլութեամբ չվերկենալ գիշերային ճնարանից եւ երիտասարդներից առաջ շտապել տաճարը աղօթելու»: Եւ աղաղակեց ծերունին. «Ես բոլորովին չեմ ծուլացել, հայր. ամբողջ գիշերը չարքերի հետ էի կըռւում եւ ոտով ճանապարհ էի կտրում: Բայց վայ ինձ, անապատական ծերունուս, նուագել վերջացել է առիւծի մկանութիններիս պնդութիւնը եւ եղնիկի ոտների արագավազութիւնը: Իսկ ժողովուրդը այժմ շատ խստասիրտ է դարձել, եւ նորաբողբոջ պատանիների մէջ այլեւս խնամք չկայ դէպի անկարող ծերունիները: Թող նրանք աղօթեն իրանց եկեղեցիներում, իսկ դու, տէր, շինիր ինձ, աղօտ ծերունուս համար առանձին եկեղեցի»: Հոգեւոր տէրը բարեհոգութեամբ ժպտաց եւ մոմից կակուղ խօսքով ասաց. «Ո՛վ մարդ, շատ ու շատ ոսկի եւ արծաթ դրամներով են կառուցւում տաճարները մեծ Անի քաղաքում. ես քրձերով եւ ես արտասուքներո՞վ պիտի քեզ համար առանձին եկեղեցի շինեմ»: Մինչեւ գետինը գլուխ տուեց ծերունին եւ ասաց. «Բարի ասացիր, հայր. բայց կայ մուրձ ոսկու տակ եւ կայ ոսկի քրձի տակ: Առաւօտեան, նախքան թմբուկը երեք անգամ կը թնդայ, մեծ արժէքաւոր հարստութիւն կը գայ քեզ մօտ ադամանդէ կողովի մէջ, վայրի ցիռի մէջքի վրայ: Վերցրու այն հարստութիւնը, տէր, եւ աղքատ ծերունու համար եկեղեցի շինիր:

Ասաց եւ հեռացաւ սարերը:

Որքան փայլուն աստղեր կան կապոյտ երկնքում, այնքան սուր պղնձի ձայներ առաւօտեան աղմկեցին լուսաբացի հանգըստութիւնը փառաւոր Անի քաղաքում: Թըմբուկի երրորդ հարուածի հետ եպիսկոպոսը իջնում է սպիտակ մարմարեայ պալատի բարձր պատշգամբից եւ տեսնում է մի ցիռ, որ ջուր է խմում շատրուանի մօտ: Ցիռի մէջքի վրայ մի հին կողով կայ, նման այն կողովներին, որոնց մէջ մուրացկանները դնում են այն հացը, որ տալիս են նրանց Քրիստոսի սէրին: Այն կողովի մէջ ծանր հարստութիւն կար. երեք պատանիներ հազիւ կարողացան վերցնել նրան ցիռի մէջքից: Բարեպաշտ եպիսկոպոսը սուրբ ջուր սրսկեց ոսկու վրայ, արտասանելով այսպիսի խօսքեր. «Եթէ դու անմաքուր ուժից ես, հող ու մոխիր դարձիր»: Հարստութիւնը ոչ հող դարձաւ, ոչ մոխիր: Այն ժամանակ նա ճարտարապետներ կանչեց Բիւզանդիայից եւ մի հոյակապ տաճար կանգնեցրեց: Չէ մեռնում ժողովրդի մէջ աղքատ հովւի, այդ հարուստ տաճարը շինողի յիշատակը, եւ այդ տաճարը Զորաւոր-Քիլիսէ է անուանւում մինչեւ այսօր»:

Զորաւոր-Քիլիսէն դիմացաւ Անիի երկրաշարժին, եւ այդէն Մեհեմմէդ երկրորդի մուրճը կոտրել է նրա կլոր եւ գեղեցիկ գմբէթը:

«Անի», Լէյ

(*Տպաւորութիւններ, Ճիչատակներ, Անցածն ու Մնացածը*: 1963 Երեւան, էջ 57–63:)



Ծիծեռնակաբերդի Նահատակաց Յուշարձանը 1965

ՆԱՀԱՏԱԿ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ

Ա. ՀԱՏԻՏԵԱՆ

1. Խոսրով եպիսկոպոս Բեհրիկյան (1869—1915)



Խոսրով եպիսկոպոս Բեհրիկյան

Ավազանի անունով Խաչատուր, բնիկ զարեցի։ Արմաշի դպրեվանքի ավագ սերնդի ներկայացուցիչ և առաջին շրջանի (1889—1895) յոթներեն մին («Խոհք և խոսք», էջ 442)։

Օրմանյանի աշակերտ և արմաշական առաջին նահատակներից մեկը։

1895 թվականին կուսակրոն քահանա է ձեռնադրվում և 1897 թվականին ստանում է ծայրագույն վարդապետի աստիճան։ Վարդապետական իր ավարտաճառի նյութն է եղել «Գրիգոր Տաթևացու կյանքն ու մատենագրական վաստակը»։

Խոսրովը առաջիններից մեկն էր, որ Օրմանյանի հանձնարարությամբ կանչվում է գավառներում առաջնորդական պատասխանատու պաշտոնի։ Նախ Տրապիզոն 4 տարի (1897—1901), ապա Մուշ (1901—1903) և Խարբերդ (1904—1908)։

Սահմանադրության հռչակումից հետո (1908), «կուսակցական գրգռմանց հետևանքով», թողնում է Խարբերդի առաջնորդությունը, մասնավոր հսկողության տակ բերվում է Կոստանդնուպոլիս, ուր զբաղվում է քարոզչությամբ։

1911 թվականին մահանում է Կեսարիայի առաջնորդ Տրդատ եպիսկոպոս Պալյանը (1887—1911)։

1912 թվականին Խոսրով ծայրագույն վարդապետը ընտրվում է Կեսարիայի թեմի առաջնորդ, «ուր իր նախորդին՝ Տրդատ եպիսկոպոսին՝ գործը պահպանելու ու զայն չքանդելու համար ամեն ջանք ըրավ» (Ա. Ալպոյաճյան, «Պատմություն հայ Կեսարիո», Ա, Կահիրե, 1937 թ., էջ 958)։

1914 թվականին, էջմիածնում, Գևորգ ե կաթողիկոսից եպիսկոպոս է ձեռնադրվում Կեսարիայի թեմի վրա։

Էջմիածնից վերադարձին ամբաստանվում է, «իբր թե Պշնամի երկրեն գրգռություն բերած ըլլա» («Խոհք և խոսք», էջ 443)։ 101 տարվա բանտարկության է դատապարտվում և դեպի Դիարբեքիր ճանապարհի վրա, Բոզանթի (Եդեսիայի մոտերը), թուրք ոստիկան ուղեկիցների կողմից սպանվում է։ «Հակառակ նահատակ սրբազանին աղերսանաց, որ ճակտին ուղղյալ գնդակով մը մահացնեն զինքը, ձեռքերը կապ կպառկեցնեն յաթաղանին տակ, ոչխարի պես մորթելով» (Թեոդիկ, «Հայ եկեղեցականության Գողգոթան», անտիպ, տե՛ս Ա. Ալպոյաճյան, նույն տեղում, էջ 958)։

Օրմանյան սրբազան իր նահատակ աշակերտին բնութագրում է հետևյալ բառերով. «Խոսրովի նկարագիրը՝ հանդարտ և խոհական վարչականությունն է եղած» («Խոհք և խոսք», էջ 443)։

Կեսարիայի թեմից նահատակվող հոգևորականներն էին հետևյալները.

Տ. Աշոտ Եպիսկոպոս Երկաթյան (1854—1915), նշանավոր մանկավարժ և բազմավաստակ դաստիարակ։

Տ. Արիստակես Եպիսկոպոս Թեմուրյան (1875—1915), ուսուցիչ, մանկավարժ։

Տ. Վահրամ Եպիսկոպոս Կիմիշկյան (1859—1915), ուսուցիչ, մտավորական։ Կախված։ (Ա. Ալպոյաճյան, նույն տեղում, էջ 1211)։

Տ. Հովհաննես վարդապետ, Թոմարզայի վանքի վանահայր։

2. Սմբատ եպիսկոպոս Սաատեթյան (1871—1915)

Արմաշի դպրեվանքի առաջին շրջանի սաներից, աշակերտ Օրմանյանի։ Ավազանի անունով Գրիգոր, բնիկ ադաբազարցի։

1895 թվականին կուսակրոն քահանա է ձեռնադրվում և 1897 թվականին ստանում է ծայրագույն վարդապետի աստիճան։ Սմբատի ավարտաճառի թեման եղել է «Ներսես Լամբրոնացու կյանքը և մատենագրական վաստակը»։

Սաատեթյանը նույնպես դպրեվանքի անդրանիկ վեղարավորներից մեկն էր, առաջնորդական պաշտոնով գավառ մեկնած 1897 թվականին, նախ Նիկոպոլիս, ապա Շաբին-Գարահիսար և հուսկ ուրեմն Կարին 1908—1915 թվականներին, հաջորդելով Զավեն եպիսկոպոս Տեր Ղեղիայանին (1898—1907)։

Օրմանյան ևս իր առաջին առաջնորդական պաշտոնավարությունը կատարում է Կարինի թեմում, 1880—1887 թվականներին։



Սմբատ եպիսկոպոս Սաատեթյան

«Կարնո ազգային կյանքը՝ իր եկեղեցական, կրթական, տնտեսական, շինարարական, վանքերու մատակարարման բաժիններով, հասցուցած էին թվապես նախանձելի վիճակի մը (1908—1914 թվականներուն), անոր տալով պետական մեքենայի մը պատկերը և տարողությունը։ Վերելքի այս կետին էր, որ վրա կհասներ առաջին համաշխարհային պատերազմը և անոր հետ 1915 թվի հայկական սարսափները և տեղահանությունը, որուն գլխավոր զոհերը պիտի դառնային Կարինը և իր հայությունը, ենթարկվելով անասանելի չարչարաքներու և զանգվածային կոտորածներու։

Իր ժողովուրդի բախտին պիտի ենթարկվեր նաև իր արժանավոր հովիվն՝ Սմբատ եպիսկոպոս՝ իր քահանայական դասին հետ նահատակվելով Երզնկայի մոտերը («Հուշամատյան Բարձր Հայքի», տե՛ս Ղազար Ջարըգ, «Կարինապատում», Բեյրութ, 1957, էջ 160)։

Սաատեթյան սրբազանի հետ միասին նահատակված քահանաներն էին.

Տ. Ներսես ավագ Եպիսկոպոս Վահանյան, առաջնորդական փոխանորդ, Օրմանյանի ձեռնասուն, ձեռնադրված 1892 թվականին։

Տ. Մակար Եպիսկոպոս Պեխոզլյան, Օրմանյանի ձեռնասուն և օծակից Տ. Ներսեսի։

Տ. Հմայակ Եպիսկոպոս Մուրադխանյան, Տ. Զարեհ Եպիսկոպոս Շյուշեյան, Տ. Զարմայր Եպիսկոպոս Գևորգյան, Տ. Հուսիկ Եպիսկոպոս Գավագյան *(նույն տեղում, էջ 130)*։

«Մխթարի նկարագիրն է քաղցր և համեղ գործունեություն, պարտքեն ու պահանջեն ոչինչ քերի չթողլով» («Խոհք և խոսք», էջ 444)։

3. Մկրտիչ վարդապետ Զղլատյան (18...—1915)

Ավազանի անունով Հովհան, բնիկ դատվանցի, արմաշական, քահանայից լսարանից, Օրմանյանի աշակերտ։

1898 թվականին Կոստանդնուպոլսում, Սկյուդարի Ս. Կարապետ եկեղեցում, քահանա է ձեռնադրվում Օրմանյանից՝ Տրապիզոնի վիճակի վրա, «դպրեվանքցվոց քահանայության դիմելը քաջալերելու դիտմամբ» («Խոհք և խոսք», էջ 448)։

Զղլատյան նախ քահանայագործում է Սեբաստիայում, ուր դժբախտություն է ունենում արկածով կորցնելու երեցկնոջն ու զավկին։ Այնուհետև վեղար է ստանում և Օրմանյանի հրահանգով հովվում է Եթովպիայի հայ գաղութը։ Ապա նշանակվում է Բայազետի թեմի առաջնորդական փոխանորդի պաշտոնում։



Մկրտիչ վարդապետ Զղլատյան

Զավեն պատրիարքի օրով կոչվում է Տիգրանակերտի վիճակի տեղապահության, ուր պաշտոնավարում է մինչև իր նահատակությունը՝ 1915 թվականի մայիս ամիսը։

«Մկրտիչ վարդապետի չարչարանքը սոսկալի էր, գլուխ-գործոց մը թուրք ճիվաղության։ Այս կենդանի մարտիրոսը ենթարկվեցավ անլուր խայտառակ նախատինքներու, և այդ վիճակով Տիգրանակերտի փողոցները և շուկան ի ցույց մուսլիմաններու՝ թմբկահար շեյխերու և դերվիշներու առաջնորդությամբ պտտցվելե վերջ, կվերադարձնեն մզկիթին բակը կառավարության շրջանակին մեջ, և հոն կառավարական պաշտոնյաներու, իսլամ խուռն ամբոխին և շեյխերու ու թմբկահար դերվիշներու ներկայությամբ՝ վրան քարյուղ կթափեն և կենդանվույն կայրեն...» (Թովմաս Գ. Մկրտիչյան, «Տիգրանակերտի նահանգին ջարդերը», Կահիրե, 1919, էջ 55—56)։

Մկրտիչ վարդապետ Զղլատյանի հետ նահատակվում են 9 քահանաներ և Առաքելոց վանքի վանահայր Վահան վարդապետը։

4. Տ. Սահակ Եպիսկոպոս Գալուստեան վարդապետ Օդաբաշյան (1875—1915)

Արմաշի դպրեվանքի չորրորդ շրջանի (1896—1901) 10 վարդապետներից և Դուրյանի առաջին ձեռնասուններից մեկն է։ Այս խմբի մեջ էին Մեսրոպ Նարոյան (ապագա պատրիարք), Ներսես արքեպիսկոպոս Փերտահճյան, նահատակ Արտավազդ վարդապետ, Կորյուն վարդապետ, Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյան, Գարեգին Խաչատրյան (Տրապիզոնի, ապագա պատրիարք), Գրիգորիս եպիսկոպոս Պալաքյան և Եղիշե վարդապետ Խաչերյան։

Տասնյակի այս ձեռնադրությունը, «Արմաշի համար աննախընթաց ... ընծայալներուն թիվին տեսակետովը, ոգևորիչ էր անոր համար ևս, որ ձեռնադրվածները ամենքն ալ իրենց կոչումին գիտակցությամբը զորացած խոստումնալից երիտասարդներ էին և կարևոր նպաստ մը կբերեին Հայ Եկեղեցւոյ ծառայության նվիրական գործին» (Բորգոմ· արքեպիսկոպոս Գուշակեան, «Եղիշե պատրիարք Դուրյան», Երուսաղեմ, 1934, էջ 190)։

Օդաբաշյանը ծնվել է 1875 թվականին Սեբաստիայում։ Ավազանի անունն է Քերովբե։ Վարդապետ է ձեռնադրվել 1901 թվականին։

Առաջնորդական պաշտոններ է վարել Սեբաստիայում, Սամսոնում, Բրուսայում և Երզնկայում։

Օդաբաշյանն ամբաստանվել է որպես «մեծ յեղափոխական Բրուսայի վալիի կողմից և «շատ գեղ ներկայացված ներքին գործոց նախարարության առջև» (Կ. Գարիկ-



Սահակ ծայրագույն վարդապետ Օդաբաշեան

յան, «Ծղեռնապատում», Բոստոն, 1924, էջ 46)։

Ինքնամատույց հանձնառու եղավ երթալ Բրուսային Երզնկա (որն առանց առաջնորդի էր մնացել), պատերազմի դժվարին ժամանակամիջոցին, այլ տեղը չհասավ և Շաբին-Գարահիսարի կողմերը սպանվեցավ» («Խոհք և խոսք», էջ 449), 1914 թվականի դեկտեմբերի 19-ին։

«Գարահիսարի Աղվանիս հայ գյուղին մոտ, Ջորան-Թեքքեսի ըսված տեղը չեթաները (Սեբաստիայի հայտնի ոճրագործ Մուամմեր վալիի կարգադրությամբ) դարանակալ կսպասեն. կառքը (վարդապետի) կհասնի հոդ, գնդակները կսուրան. Տ. Սահակ վարդապետը և կառապանը Առաքել՝ կիյնան անկենդան, գնդակներու տարափին տակ։ Սեբաստիայի պատվական մեկ զավակը, եկեղեցական այնքան կարևոր դեմք մը, նույնիսկ պարտականության ճանապարհին վրա, քաղաքական այսքան բացարձակ եղեռնի մը, ծուրք դավաճանության զոհը կըլլա։ Սեբաստահայը խոր սուգի ու սարսափի կմատնվի։ Այս կըլլա ընդհանուր զորաշարժեն ետք, **սկիզբը և ազդանշանը հայաջինջ թուրք հաղթականության»** (*«Ծղեռնապատում», էջ 48)։

Սահակ ծայրագույն վարդապետ Օդաբաշեանը «գավառական պաշտոններու համար արթուն և անձնդիր պաշտոնյա մըն էր» («Խոհք և խոսք», էջ 449)։

5. Արտավազդ ծայրագույն վարդապետ Գալենդերյան (1876—1915)

Արմաշի չորրորդ շրջանի 10 վարդապետներից մին, օծակից նահատակ Սահակ ծայրագույն վարդապետ Օդաբաշյանի։

Ծնվել է 1876 թվականին Բրուսայի Ծնիչէ գյուղում։ Ավազանի անունն եփրեմ։ Ձեռնադրվել է 1901 թվականին։

Շնորհալի, բանաստեղծական տաղանդով օժտված, բրթուն հոգի և պայծառ իմացականություն։

Առաջնորդական պաշտոններ վարեց Թոքատո և ապա ընտրվեց առաջնորդ Եդեսիայի, ուր ծավալեց վարչական, կրթական, քարոզչական բեղուն գործունեություն։

«Տարագրության ժամանակ եդեսացվոց ընդդիմության մանսակից սեպվեցավ և քաղաքին ընկճվելուն վրա, ինքն ալ դատվեցավ և սպանվեցավ։

Արտավազդ վարչական խոհականության հետ, հատուկ հաջողականություն և գործու-



Արտավազդ ծայրագույն վարդապետ Գալենդերյան

նեութիւն ուներ երգեցողութեան և երաժշտութեան մէջ» («Խոհք և խոսք», էջ 450)։

Զգայուն, գեղապաշտ հոգի և որպես քընքուշ րանաստեղծ, Արտավազդ վարդապետի գրչին են պատկանում մի շարք քերթվածներ, որոնցից է «Վիրավոր տատրակը» (տե՛ս «Արմաշի դպրեվանքը», էջ 217), գեղեցիկ՝ իր մտահղացման և արտահայտչական ձևերի մեջ։

Ինքն էլ «անմեղուկ մի տատրակ», ընկավ թշնամու սրի առաջ, «եղերերգելով ցավն ու կսկիծն իր խորունկ»։

6. Պարգև ծայրագույն վարդապետ Դանիելյան (1888—1915)

Արմաշի դպրեվանքի վեցերորդ շրջանի (1899—1905) չորս վարդապետներից՝ Պարգև, Շավարշ, Պսակ և Շահե, որոնց Դուրյան սրբազանը ձեռնադրեց 1905 թվականին Արմաշում, Զմյուռնիայից գալով։

Ավազանի անունով Հայկ, բնիկ կոստանդնուպոլսեցի (Խասգյուղ)։

1896 թվականի Կոստանդնուպոլսի հայկական կոտորածների ժամանակ որբանում է և



Պարգև ծայրագույն վարդապետ Դանիելյան

գերմանացիների կողմից տարվում է Գերմանիա սովորելու։ «Բայց կրոնափոխության չհավանելով Պատրիարքարան կդիմե և զինքը ետ բերել կուտամ և դպրեվանք կհղեմ,— գրում է Օրմանյան («Խոհք և խոսք», էջ 452)։

1899—1905 թվականներին Հայկը սովորում է դպրեվանքում և 1905 թվականին ներկայացնելով իր վարդապետական ավարտաճառը՝ «Վարդապետք Հայաստանյայց Եկեղեցվո», վարդապետ է ձեռնադրվում։

Օրմանյանի պատրիարքության օրով և նրա պաշտպանության ներքև Պարգև վարդապետը մեկնում է գավառ, նախ Նիկոմիդիա և 1914 թվականին՝ Բրուսա, ուր, իր եկեղեցանվեր գործունեության համար, ձերբակալվում է եղեռնից առաջ, բանտարկվում, դատվում և դատապարտվում է։ Նահատակվում է Դեր Զորի բանտում։ «Պարգևին չի պակսիր ոչ աշխատասիրությունը և ոչ հաջողականությունը» («Խոհք և խոսք», էջ 452)։

7. Պսակ ծայրագույն վարդապետ Տեր-Խորենյան (1882—1915)

1905 թվականին Դուրյանի ձեռնադրած քաոյակի Բենիամինը։

Ավազանի անունով Անուշավան, գուրդբելենցի։

Օրմանյան պատրիարքի ձեռքի տակ, Կոստանդնուպոլսում մի որոշ ժամանակ քարոզչական պաշտոններ կատարելուց հետո, ընտրվում է առաջնորդ Քղիի (1907—1912) և ապա Խարբերդի, ուր ծավալում է բեղուն առաջնորդական, քարոզչական գործունեություն։ Միաժամանակ զբաղվում է գրական, բանասիրական աշխատանքներով։

Բոլոր արմաշականները, Օրմանյանի և Դուրյանի հովանու տակ, գրական իրենց անդրանիկ փորձերը կատարել էին «Մասիս» կրոնական շաբաթաթերթում (1896) և Կոստանդնուպոլսի այլ պարբերականներում, ուր տպվում էին նաև նրանց հոդվածները։ Պսակ վարդապետի ավարտաճառն էր «Ս. Գրքի կանոնը Հայաստանյայց Եկեղեցվո մեջ»։

Պսակ վարդապետ Քղիի իր առաջնորդության տարիներին զբաղվում է հատկապես Քղիի գավառաբարբառի ուսումնասիրությամբ։ Ահա թե ի՛նչ է գրում նա այս մասին.

«Խորձյան գավառ» անուն հինգ հատորներ բաղկացյալ ընդարձակ ձեռագիր աշխատության մը մեջ, զոր գրած եմ Քղի պաշտոնավարութեանս (907—912) շրջանին, ուսումնասիրած եմ գավառի դպրեվանքներուն պատմութիւնը, որ հետաքրքրական երևույթ մը կպատկերացնե։ Ով կկարծեմ թե, մեր սիրելի դպրեվանքին քսանևհինգամյակին առթիվ ամենեն հարմար, և ավուր պատշաճի



Պսակ ծայրագույն վարդապետ Տեր-Խորենյան

նյութը կրնա կազմել ներկա աշխատությունը, քանի որ դպրեվանքներու «ծագումները» կշոշափե ան։ Այս ուսումնասիրությունը ըրած ենք ձեռագիրներե քաղվածներով, անձնական պրպտումներով և վավերական փաստաթղթերու վրայեն։ Ուսումնասիրությանս մեջ՝ համոզված ենք՝ թե Խորձենի վանքերու միաբանները համառ աշխատողներ եղած են։ Վանական մոնոզոններ բնավ պարապ չեն մնացած, և եվրոպական վանքերու միաբաններու նման նվիրված են աշխատության, ոմանք՝ գրչագրության, ոմանք՝ կոկումի, տողաշարողի, կազմողի, գծագրողի, •ներկողի, ծաղկողի մասնագիտությամբ, և դիտած ենք, որ ձեռագիրներն առհասարակ լավագույն արտադրություններ են։ Մասնագիտական այս պարապումները՝ անհատնում եռանդ և հարատև ոգի մը կհատկանշեն մեր վանականներու քով, որոնք աշխատության ճաշակն ունեին և անգործության չարիքներու ենթակա չէին ըլլար. պատիվ իրենց, փառք իրենց» («Արմաշի դպրեվանքը», էջ 264)։

Պսակը նահատակվեց Խարբերդի ողջ ժողովրդի հետ։ «Տարագրությանց ատեն նա ալ քաղաքեն հանվեցավ և ճանապարհին սպանվեցավ, ժիր երիտասարդության հասակին մեջ, երբ լավագույն ակնկալություններու իրավունք կընծայեր» («Խոհք և խոսք», էջ 453)։

8. Շավարշ ծայրագույն վարդապետ Սահակյան (1881—1915)

Արմաշական, Պսակ և Պարգև նահատակ վարդապետների օծակից, աշխարհական անունով Արշավիր, ծնվել է 1881 թվականին Շաբին-Գարահիսարում։

Վարդապետական ավարտաճառն էր «Հայ Եկեղեցիին հարաբերությունները մյուս եկեղեցիներուն հետ»։

Փոխ-առաջնորդական և առաջնորդական պաշտոններ վարեց Սեբաստիայում, Թորգոմ եպիսկոպոս Գուշակյանի ձեռքին տակ, ապա Եվդոկիայում, ուր և նահատակվեց։

«Խոհական և անխոնջ աշխատող մըն էր, որ լավ ապագա կխոստանար («Խոհք և խոսք», էջ 452)։



Շավարշ ծայրագույն վարդապետ Սահակյան

9. Սուրեն վարդապետ Գալեմյան (18...—1915)

Արմաշական, յոթերորդ շրջանի (1900—1908) երեք վարդապետներից՝ Սուրեն Գեղամ, Վահրամ, որոնցից առաջին երկուսը՝ նահատակ։

Ավազանի անունով Պողոս, արաբկիրցի։ Սարկավագ է ձեռնադրվել Օրմանյանից, իսկ վարդապետ՝ Ստեփանոս արքեպիսկոպոս Հովակիմյանից։

1915 թվականին Սուրենը Բաղեշի առաջնորդն էր, ուր զոհ գնաց եղեռնին՝ իր ժողովրդի հետ։

«Գործունյա և աշխույժ բնավորությամբ, ապագային համար լավ հույսեր կներշնչեր» («Խոհք և խոսք», էջ 453։

10. Գեղամ վարդապետ Թեվեքելյան (18...—1915)

Դասակից, օծակից և ճակատագրակից Սուրեն վարդապետի։

Ավազանի անունով Խաչիկ, շաբինգարահիսարցի, առաջնորդ Բաղեշի, ուր նահատակվեց։ «Բնավորությամբ հեզ և մեղմ, բայց գործով ժիր երիտասարդ էր Գեղամ և հուսալից ապագա կխոստանար» («Խոհք և խոսք», էջ 543)։



Գեղամ վարդապետ Թեվեքելյան

11. Համազասպ վարդապետ Եղիայեան (1864—1915)

Արմաշական։ Դպրեվանք է ընդունվում «հառաջացյալ տարիք»-ում։ Նախկին ուսուցիչ, ավազանի անունով՝ Հակոբ, յոզղատցի։

1910 թվականին վեղար է ստանում Ստեփանոս արքեպիսկոպոս Հովակիմյանից, Արմաշում։

Առաջնորդական պաշտոն է վարում Սամսոն-Ջանիկի վիճակում, ուր նահատակվում է։

Նահատակ արմաշականների մեջ պետք է հաշվել նաև նախկին Մաշտոց վարդապետ Փափազյանին, Մեհրուժան վարդապետ Աշխարունուն, որոնք նահատակվեցին որպես աշխարհական։

Արմաշականներից աքսորվեցին Զավեն պատրիարք, Երվանդ եպիսկոպոս Փերտահճյան, Գարեգին Տրապիզոնցին, Գրիգորիս վարդապետ Պալաքյանը, Համայակ վարդապետ Բաղդասարյանը և Մամբրե վարդապետ Սիրունյանը։

12. Ներսես եպիսկոպոս Դանիելյան (1868—1914)

Կիլիկյան Աթոռի միաբան։ Ծնվել է 1868 թվականին Յարփուզում (Զեյթուն)։ Ավազանի անունով Գևորգ։ Աշակերտել է Սսի մայրավանքին և Սամաթիայի Սահակյան վարժարանին։

Որոշ ժամանակ Ադանայում ուսուցչությամբ զբաղվելուց հետո, 1890 թվականին վարդապետ է ձեռնադրվում Վեհապետյան Մկրտիչ եպիսկոպոսից։

1890—1895 թվականներին առաջնորդական փոխանորդ Ալեքսանդրետի (Անտիոք)։

1896 թվականին ամբաստանվում է որպես Զեյթունի ապստամբության ղեկավարներից մին և բանտարկվում է Հալեպում ու ապա աքսորվում Դամասկոս։

Օրմանյան պատրիարքի երաշխավորությամբ բերվում է Կոստանդնուպոլիս, ուր մնում է 10 տարի և զբաղվում է քարոզչությամբ՝ միշտ հսկողության տակ։

1907 թվականին, Սահակ Բ Խապայան կաթողիկոսի երաշխավորությամբ, վերադառնում է Սիս։ Ադանայի կոտորածից հետո (1909) բանտարկվում է՝ Հաջընի ինքնապաշտպանության պարագլուխներից մեկը լինելու մեղադրանքով։

1910 թվականին Ադանայում է, մինչև 1914 թվականը, երբ ընտրվում է Յոզղատի առաջնորդական փոխանորդ։ 1911 թվականին եպիսկոպոս է ձեռնադրվում։

Դանիելյան սրբազան Կոստանդնուպոլիս գտնված միջոցին հրատարակում է երկու քա-

րոզագրքեր՝ «Կյանքն առանց հավատքի», ժողովրդական քարոզներ, Ա, Վիեննա, 1903 թ., և «Կաթիլ մը ջուր այրած սրտերու», Կոստանդնուպոլիս, 1912 թ.։

Նահատակ հոգևորականի գրական ծածկանունն էր «Սսական վարդապետ»։

«Կյանքիդ բոլոր շրջաններուն մեջ չարչարանքը միայն ճանչցար, միշտ կալանակապ և արգելափակ» («Հուշարձան», էջ 64)։

13. Հակոբ-Աշոտ եպիսկոպոս Փափազյան (1847—1914)

Կոստանդնուպոլսեցի։ Ծնվել է 1847 թվականին։ Վարել է մի շարք քարոզչական և առաջնորդական պաշտոններ Կոստանդնուպոլսում և գավառներում։ «Տառապանքի տակ վախճանած է Իզմիրի զինվորական բանտը, Կիլիկիո աղետի մասին մատուցած իր տեղեկագրին մեկ պատճենին իր թուղթերուն մեջեն գտնված ըլլալուն համար» («Հուշարձան», էջ 81)։

14. Խորեն եպիսկոպոս Դիմաքսյան (1864—1914)

Ծնվել է 1864 թվականին Կյուրինում։ Կիլիկյան Աթոռի միաբան։ Վարդապետ է ձեռնադրվել 1892 թվականին։ Եղել է առաջնորդ Կյուրինի։ Նահատակվել է բանտում։

15. Եղնիկ եպիսկոպոս Գալբաքճյան (1864—1915)

Ծնվել է Կոստանդնուպոլսում 1860 թվականին։ Ուսանող Կալաթա Սերայի լիսեին և բժշկական «Միլքիե» վարժարանին։ Արմաշական վարդապետ՝ 1886 թվականին, եպիսկոպոս 1912-ին։ Մինչև 1915 թվականը առաջնորդ Բալուի, ուր նահատակվում է։

16. Գևորգ ծայրագույն վարդապետ Թուրյան (Պչաքճյան) (1872—1915)

Ծնվել է 1872 թվականին Ռոտոսթոյում։ Սաղմոսական և այնուհետև ուսուցիչ Ջորլուի ազգային վարժարանում։ 1897 թվականին ԱՄՆ-ում հետևում է աստվածաբանական դասընթացների։ 1911 թվականին վարդապետ է ձեռնադրվում և Արմաշի դպրեվանքում դասավանդում է աստվածաբանություն և փիլիսոփայություն։ 1912 թվականին ընտրվում է առաջնորդական տեղապահ Տրապիզոնի։

Տարագրության ճանապարհից Կոստանդնուպոլիս հեռագրում է. «Կարին պատերազմական ատյան կտանին զիս», և այնուհետև ոչ մի լուր նրանից (նույն տեղում, էջ 83)։

17. Վարդան ծայրագույն վարդապետ Հակոբյան (1846—1914)

Սասունցի, Ահարոն գյուղից, միաբան Մուշի Ս. Կարապետ վանքի։

1880 թվականին վարդապետ է ձեռնադրվում և ստանձնում է Կենճի նորակազմ վիճակի առաջնորդական տեղապահի պաշտոնը, ուր ծավալում է կրթական գովելի գործունեություն, ինչպես նաև Սլիվան, Ֆարխենի գյուղերում։

1893—1894 թվականներին, Սասունի կոտորածների առիթով, թուրքական խժդժությունների մասին ֆրանսերեն լեզվով տեղեկագիր է ներկայացնում ռուս և անգլիացի հյուպատոսներից կազմված քննիչ հանձնաժողովին։

1893—1899 թվականներին կառավարում է Մուշի թեմը և ծավալում է շինարարական մեծ գործունեություն, և այնուհետև, մինչև իր նահատակության թվականը, վարում է Մուշի Ս. Կարապետ վանքի վանահայրությունը։

Մուշի հայության տեղահանության օրերին, նրան ևս «շատ մը երևելիներու հետ բոկոտն դուրս կհանեն Մուշեն և Ալի Ջոնան գյուղի մեջ կայրեն նավթով» (նույն տեղում, էջ 84)։

18. Անանիա ծայրագույն վարդապետ Հապարապետյան (1861—1915)

Ծնվել է 1861 թվականին Սեբաստիայում (Դերենդե)։ Սաղմոսական։ Վարդապետ է ձեռնադրվում Հարություն պատրիարք Վեհապետյանից 1892 թվականին և ծառայում է սուրբ տեղյաց մեջ։

Եղեռնի նախօրյակին ընտրվում է առաջնորդական տեղապահ Եդեսիայի և ապա առաջնորդ, մինչև 1907 թվականը։

Եղեռնը նրան գտնում է Բաբերդի առաջնորդական Աթոռի վրա և տանում։

Նահատակ հոգևորականներ են նաև հետևյալները.

19. **Մելիսեդեկ վարդապետ Հովիվյան,** *առաջնորդ Երզնկայի և Կեմախի։*

20. **Գևորգ վարդապետ Նալբանդյան** *(1857—1915), միաբան Աղթամարի, առաջնորդական տեղապահ Սղերդի։*

21. **Համազասպ վարդապետ Վարդանյան** *(1868—1915), միաբան Կտուց անապատի, առաջնորդ Ջմշկածագի սանջաքի։*

22. **Կորյուն վարդապետ Սրապյան** *(1847—1915), միաբան Գլակա վանքի, տեղապահ Սղերդի և ապա Բասենի։*

23. **Կարապետ վարդապետ Հակոբյան,** *սաղմոսական։*

24. Երեմիա վարդապետ Լիֆոյան *(1875—1915), սաղմոսական, տեսուչ Բեյրութի։*

25. Սահակ վարդապետ Սարգիսյան, *սաղմոսական, տեսուչ Բեյրութի։*

26. Հովսեփ վարդապետ Սողոմոնյան *(1860—1915)։*

27. Ներսես վարդապետ Մկրտչյան *(1864—1915), միաբան Եվդոկիայի Ս. Հովակիմ-Աննա վանքի, առաջնորդական փոխանորդ Եվդոկիայի։*

28. Աբգար վարդապետ Յոթներեքյոյան, *առաջնորդական փոխանորդ։*

29. Բարսեղ ծայրագույն վարդապետ Մանկըրյան *(1850—1915), սսական։*

30. Սահակ վարդապետ Զոլաֆյան, *սսական։*

31. Ներսես ծայրագույն վարդապետ Բարթողիմեոսյան *(1895—1915), հին արմաշական։*

32. Հովհաննես վարդապետ Մավյան *(1858—1915), հին արմաշական։*

33. Օհան վարդապետ, Կյումիշխանեի *վանքի վանահայր։*

33—37. *Մուշի Ս. Կարապետ վանքի միաբաններ* Եղիշե վարդապետ Պալունի, Կոմիտաս վարդապետ Արծրունի, Եղիշե վարդապետ Կարապետյան, Ստեփանոս վարդապետ Բաղդասարյան, Կարապետ վարդապետ Լարիյան։

Նահատակ հայ հոգևարականների մեջ մեծ թիվ էր կազմում նահատակ հայ քահանայությունը։ Արևմտյան Հայաստանի ամեն գյուղ ուներ իր ժամն ու քահանան։ Ինչպես նահատակ վարդապետների, այնպես էլ նահատակ քահանաների լրիվ ու ամբողջական ցուցակը կազմել, նրանց բոլորի անուններն ու կենսագրությունները ունենալ անհնար է, նույնիսկ եղեռնից 50 տարի հետո։ Զեռքի տակ ենք ունեցել եղեռնին վերաբերյալ բոլոր հրատարակությունները, հուշերն ու նկարագրությունները և քաղել ենք հետևյալ մի շարք անունները միայն, մինչ նահատակ քահանաների թիվը հասնում է շուրջ 4 000-ի.

Տ. Հուսիկ Քաջունի *(1851—1915), արաբկիրցի, ազգային երեսփոխան.* Տ. Վարդան Եպիսկոպոս Ասլանյան *(1863—1915), բինկյանցի, ծանոթ մանկավարժ, հրապարակագիր, գործակից Թլկատինցուն խարբերդում և ճակատագրակից բանտում.* Տ. Եղիա Եպիսկոպոս Ղարիբշանյան, *Սղերդի առաջնորդական տեղապահ։* Տ. Մեսրոպ, Տ. Աշոտ, Տ. Առսեն Եպիսկոպոսներ: Տ. Տաճատ Եպիսկոպոս Բեիսյան *(Քղի)։* Տ. Սուրեն Եպիսկոպոս Մելիքոնյան *(Քղի)։ Ախլոնի 5 քահանա հայրեր, անուններն անծանոթ։* Տ. Մարտիրոս Եպիսկոպոս, Տ. Արիստակես Եպիսկոպոս Հարությունյան, Տ. Գարեգին Եպիսկոպոս Վեմյան, Տ. Արիստակես Եպիսկոպոս Օձնեցի, *կարնեցիներ, նահատակված առաջնորդ* Սմբատ Եպիսկոպոս Սաատեբյանի *հետ։* Տ. Գրիգոր Եպիսկոպոս *(Ղալթախչի).* Տ. Ներսես Եպիսկոպոս *(Կաղզվան).* Տ. Իրավափառ, Տ. Եփրեմ *և* Տ. Անդրեաս Եպիսկոպոսներ *(Սեբաստիա)։* Տ. Մատթեոս Եպիսկոպոս Կոկոյան, Տ. Հովհաննես Եպիսկոպոս *(Ակն),* Տ. Սուքիաս *և* Տ. Աբրահամ: Տ. Մամբրե Թորիկյան *(Մարզվան).* Տ. Մեսրոպ, Տ. Շիղա, Տ. Հուսիկ *(Տրապիզոն)։* Տ. Հարությունե Եպիսկոպոս Տեր-Մելիքոնյան *(Այնթապ)։* Տ. Պետրոս Եպիսկոպոս Գասյան *(Ակն)։* Տ. Խորեն Եպիսկոպոս *(Բալու)։* Տ. Գասպար Եպիսկոպոս Ավետիսյան. Տ. Արտաշես Եպիսկոպոս Ավետիսյան *(Ակն)։* Տ. Ներսես Տոբյաշյան *(Իզմիր)։* Տ. Հովհաննես Եպիսկոպոս Քյոմյուրճյան, Տ. Կարապետ Եպիսկոպոս Մխալյան *և որդին՝* Տ. Բարթող Եպիսկոպոս Մխալյան *(Պարտիզակ)։* Տ. Մատաթիա Եպիսկոպոս Կյունեյուրյան, Տ. Փիլիպոս Եպիսկոպոս Աբրահամյան, Տ. Ներսես Եպիսկոպոս Պալյան, Տ. Բառնաբաս Եպիսկոպոս Բաբունյան *և բազմաթիվ ուրիշներ։*

Հայ կաթողիկե նահատակներ

Ապրիլյան եղեռնի օրերին, թշնամին հնձեց հայ ժողովրդի զավակներին, առանց հարանվանական տարբերության։ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու եպիսկոպոսների, վարդապետների, քահանաների և ժողովրդի արյունը եղբայրորեն խառնվեց հայ կաթողիկե նահատակ հոգևորականության և հավատացյալների արյան հետ։

«Մրրկաւ բաժանուած» եղբայրները միացան արյան և նահատակության ճանապարհի վրա, «վասն Յիսուսի և վասն հայրենեաց» մղված ճակատամարտում։

Ըստ հայ կաթոլիկ աղբյուրների, Հայ Կաթողիկե Եկեղեցու և հասարակության կորուստներն են եղել հետևյալները.

Եպիսկոպոս՝ 8, վարդապետ և քահանա՝ 106, կույսեր՝ 55, և ավելի քան 80 000 հավատացյալներ («Բազմավեպ», 1919, № 10, էջ 284, «Հանդես ամսօրյա», 1917—1918, էջ 134, 1920, էջ 38—51)։

Եպիսկոպոսներ.

1. Անդրեաս Եպիսկոպոս Զելեպյան (1848—1915), մերդինցի, նահատակված Դիարբեքիրում։ «Գետինը փորելով ջինքը մինչև վիզը կթաղեն և հետո տապարով գլուխը կտոր-կտոր կընեն» («Հանդես ամսօրյա», 1920, էջ 40)։

2. Ստեփանոս Եպիսկոպոս Իսրայելյան (1866—1915), մշեցի։

3. Հակոբ Եպիսկոպոս Թոփալյան (1855—1915), պարտիզակցի։ «Ողջ-ողջ կայրեն» (նույն տեղում, էջ 41)։

4. Լևոն եպիսկոպոս Քեշեճյան *(1860—1915), մարաշցի։*

5. Կարապետ եպիսկոպոս Քչուրյան *(1847—1915), խոտորջուրցի։*

6. Հովսեփ եպիսկոպոս Մելիքսեթյան։

7. Միքայել եպիսկոպոս Խաչատրյան *(1846—1915), մալաթիացի։ «Կուրծքին վրա կրակ կվառեն և սուրճ կեփեն» (նույն տեղում, էջ 39)։*

8. Ղևոնտիոս եպիսկոպոս Մալոյան *(1878—1915) մերդինցի։*

Նահատակ հայ կաթոլիկ վարդապետների մեջ ևս կային մտքի և սրտի տեր պատրաստված հոգևորականներ, վեհետիկի և վիճնայի մխիթարյաններ, այսպես.

1. Հ. Ստեփան վարդապետ Սարյան *(1865—1915), գաղատիացի, մանկավարժ, աստվածաբան, խմբագիր «Բազմավեպ»-ի, հեղինակ «Աստվածաբանություն տեսական» (1894), «Մագնիսական քուն» (1901), «Էակներու ծագում» (1905) և այլ աշխատություններ։*

2. Հ. Կարապետ վարդապետ Տեր-Սահակյան *(1882—1915), մշեցի, բանաստեղծ, բանասեր և մանկավարժ, հեղինակ «Հայ կայսերք Բյուզանդիոնի» 2 հատոր աշխատության (1907), «Համիդի տապալումը» (1910) և մատենագրական ուսումնասիրությունների՝ Փավստոսի, Կորյունի և Փարպեցու մասին։ Օծակից և բախտակից Հ. Ս. Սարյանի։*

3. Հ. Թովմաս վարդապետ Օղաբաշյան *(1887—1915), տրապիզոնցի, մանկավարժ և աշխարհագրագետ։*

4. Հ. Պողոս վարդապետ Գասպարյան *(1878—1915), մերդինցի, աստվածաբան և մանկավարժ։*

5. Հ. Մատթեոս վարդապետ Հանյան *(1867—1915), խոտորջուրցի, բանասեր. զբաղվել է մանավանդ իր ծննդավայրի գավառաբարբառի, սովորույթների և զրույցների ու հեքիաթների ուսումնասիրությամբ։ Վիճնայի Մխիթարյան։ Հրատարակել է «Մատթեոսի Ավետարանը» (ոտանավոր, 1897), «Երգեր, առակներ, հանելուկներ Խոտորջրո» (1904), «Հին ավանդական հեքիաթներ Խոտորջրո» (1907), «Տաղարան հոգևոր» (1910)։ Ունի Խոտորջուրի գավառաբարբառի մասին ընդարձակ մի ուսումնասիրություն։*

Անարատ Հղության նահատակ քույրերից պետք է հիշել մեծավորուհի Քամելիա Փիլիպոսյանին, Իսկուհի, Ռամելա և Երանուհի քույրերին (Թոխատ), մեծավորուհի Վասիլուհուն, Մաքրուհի և Համասիպուռ քույրերին (Խարբերդ), Էմիլիա, Մագթաղինե, Քլեմանտին և Ժերմեն քույրերին (Մալաթիա և Խարբերդ)։

Հայ բողոքական նահատակներ

Ապրիլյան եղեռնին զոհ տվեց նաև Արևմտյան Հայաստանի հայ բողոքական համայնքը՝ իր համալսարանական պրոֆեսորներով, վերապատվելիներով և քարոզիչներով։

սահատակ հայ բողոքական մտավորականության և հոգևորականության մեջ էին.

1. Պրոֆ. Կարապետ Սողիկյան *(1874—1915), խարբերդցի, լեզվագետ, քիմիաբան և դասախոս։ Գործակից Թլկատինցու և Ռուբեն Չարդարյանի։ «Գանակոծման հետևանքով մեռած Խարբերդի ամերիկյան հիվանդանոցում»։*

2. Պրոֆ. Մկրտիչ Որբեյան *(1870—1915), մալաթիացի, եղբորորդին բանաստեղծ Ռուբեն Սրբերյանի. երկրաբան և աշխարհագրագետ։ «Մտագար վիճակի մեջ կնահատակվի Խարբերդի բանտին մեջ»։*

3. Պրոֆ. Հովհաննես Պուճիգանյան *(1873—1915), չնգուշցի, մանկավարժ և փիլիսոփա։*

4. Պրոֆ. Նիկողոս Թենեքեճյան *(1863—1915), խարբերդցի, մանկավարժ և ազգապետ Խարբերդի շրջանի հայ բողոքական համայնքի։*

5. Պրոֆ. Տոնապետ Կ. Լյուլեճյան *(1876—1915), խարբերդցի, կենսաբան, բուսաբան և կենդանաբան, նահատակված կարինում, թարգմանել է Հոլգֆելլոյի «Իվանջելին»-ը։*

6. Պրոֆ. Առաքել Կ. Սիվասլյան *(1859—1915), կեսարացի, աստղագետ և մաթեմատիկոս, դասախոս Մարզվանի կոլեջում։*

7. Պրոֆ. Հովհաննես Հակոբյան *(1862—1915), մունճուսունցի, օրենսգետ և լեզվաբան, հեղինակ անգլերեն-հայերեն կարևոր բառարանի։*

8. Պրոֆ. Հովհաննես Առոգյան, *խարբերդցի, կենսաբան, դասախոս Սանասարյան վարժարանի և Մարզվանի կոլեջի։*

9. Պրոֆ. Ջևսի Մարոսյան, *այնթապցի, 42 տարեկան, մանկավարժ և հոգեբան։*

10. Պրոֆ. Լութֆի Պապիկյան, *այնթապցի, 32 տարեկան, մաթեմատիկոս և երկրաբան։*

11. Պրոֆ. Արշակ Ռումյան, *ուրֆացի, 30 տարեկան, լեզվաբան։*

Նահատակ պատվելիների մեջ հիշատակվում են. Կիրակոս Խաչատուրյան, Չաճարիա Սղիկյան, Պետրոս Պետրոսյան, Սամվել Մանուկյան, Հայրապետ Օտյան, Հովհաննես Էսկիճյան, Ա. Գևորգյան, Ա. Յարղըմյան, Միհրան Գազանճյան, Սողոմոն Ագչգյան *(Խաշվան, Ուրֆա),* Կ. Սինանյան, Արշակ Թյությունճյան, Գրիգոր Ստեփանյան, Միքար Մնչերյան, Գևորգ Դեյիրմենճյան, Գրիգոր Տեր-Պողոսյան, Հակոբ Նաճարյան, Խաչա-

տուր Թոփուզյան, Երվանդ Գապասագալյան, Սամվել Քեհտիկյան, Մատթեոս Հովիվյան և շուրջ 30 բողոքական քարոզիչներ («Հուշարձան», էջ 75)։

Եվ կատարվեց կատարվելիքը։

«Իսկ երանելի սուրբ հաճանային ոչ եթէ մարմնական համարէին զկուիւն, այլ հոգևոր առաքինութիւն և ոչ ինչ շտապեալ տագնապեցան, այլ մեծաւ համբերութեամբ տանէին զնգնութիւնս... զի ժամանակեալ վշտօն զանժամանակեան երանութիւնսն ժառանգեցեն» (Ողիշե)։

Ամեհի փոթորիկը եկավ և անցավ Հայ եկեղեցու և հայ հոգևորականության վրայով։

«Աստուած, մտին ներքանոսի ի ժառանգութիւն իւր, պղծեցին զտաճար իւր, արկին զդիակունս ծառայից իւրոց գէշ թռչնոց երկնից... հեղին զարիւն նոցա որպէս զջուր» (Սաղմ. ՀՀ 1—3)։

Չկան Արմաշը, Սիսը, Աղթամարը, Մուշի Ս. Կարապետը, ինչպես չկան մեր բյուրավոր այն վանքերն ու եկեղեցիները, որոնց կամարների տակ և խցերում «Հայ միտքը երբեմն լույս կքամեր, ու բոլոր այն գյուղերը, որոնց մեջ հայ ավանդությունները դեռ կպլպլային» (Հ. Ճ. Սիրունի, «Էջմիածին», 1961 սեպտեմբեր, էջ 27)։

Չկան մեր սրբավայրերը, «որոնց կվազեր մեր ժողովուրդը հրաշք աղերսելու համար։ Բայց կա ինքը, հայ ժողովուրդը, միշտ լույսի ծարավ, միշտ իր ստեղծագործ ճիգին մեջ» (նույն տեղում, էջ 26)։

Չկան Արևմտյան Հայաստանում մեր հազարավոր վանքերն ու եկեղեցիները, բայց կա ու կենդանի է, հայրենի աշխարհի սրտին վրա, հավերժական Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ մեր հավատքի ամրոցը, որպես դարավոր ու պատմական անհաղթահարելի կենտրոնը Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցու, խանձարուրը՝ բոլոր դարերի Ղևոնդյանց ու Վարդանանց, կան ու պայծառ են մեր նվիրապետական բոլոր Աթոռները, մեր ազգային-եկեղեցական թեմերը իրենց նորակառույց եկեղեցիներով, հավատացյալներով, և որոնք, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ղեկավարությամբ, պայծառ ու կենդանի են պահում երեկի նահատակ մեր Հայ եկեղեցին և պատրաստում են, նահատակ մեր հոգևորականների փոխարեն, մեր եկեղեցականների նոր սերունդը Հոգևոր ճեմարանում, ժառանգավորաց վարժարաններում և դպրեվանքներում, Ղևոնդյանց ոգով, հավատով և հայրենասիրությամբ։

«Երանի՞ մնոլոցն որ ի Տէր ննջեցին, զի գործ իւրեանց չոհան զկնի նոցա» (Յայտնթ. ԺԴ 13)։

Փա՞ռք մեր նահատակ հոգևորականներին։

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։

ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ
ԲՌՆԱԳԱՂԹԵՐԷՆ ԱՌԱՋ ԵԻ ԵՏՔ
(ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ՁԻՆԱԴԱՐԻ ՕՐԵՐՈՒՆ)

Վիլայէթի սահմաններուն մէջ գտնուող շրջաններ	Բ Ն Ա Կ Չ Ո Ւ Թ Ի Ւ Ն			
	Պատերազմէն առաջ	Գումար	Պատերազմէն ետք	Գումար
ՍՎԱՋԻ ՎԻԼԱՅԷԹ				
Սվազ	55,000		12,000	
Թոքաթ	30,000		1,800	
Ամասիա	30,000		2,000	
Շապին-Գարահիսար	40,000		1,000	
Կիւրին	28,000			
Տիվրիճ	24,000			
Տարհնտէ	18,000	225,000		16,800
ԷՐԶՐՈՒՄԻ ՎԻԼԱՅԷԹ				
Էրզրում	78,000			
Էրզինճան	25,000			
Պայպուրթ	19,000			
Բասէն	10,000			
Թերճան	12,000		1,500	
Քեմախ	7,000			
Քղի	20,000			
Խնուս	21,000			
Իսփիր	3,000			
Պայազիտ	20,000	215,000		1,500
ԽԱՐԲԵՐԴԻ ՎԻԼԱՅԷԹ				
Խարբերդ	65,000			
Էկին	34,000			
Արաբկիր	29,000		35,000	
Չմըշկածակ	17,000			
Չարսանճաք	23,000			
Մալաթիա	36,000	204,000		35,000
ՏԻԱՐՊԵՔԻՐԻ ՎԻԼԱՅԷԹ				
Տիարպեքիր	60,000			
Բալու	20,000		3,000	
Արղանա	12,000			
Ջընգուշ	13,000			
Մարտին	19,000	124,000		3,000
	Փոխադրելի	768,000	Փոխադրելի	56,300

Վիլայէթի սահմաններուն մէջ գտնուող շրջաններ	Բ Ն Ա Կ Ջ Ո Ի Թ Ի Ի Ն			
	Պատերազմէն առաջ	Գումար	Պատերազմէն ետք	Գումար
	Փոխադրեալ	768,000	Փոխադրեալ	56,300
ՊԻԹԼԻՍԻ ՎԻԼԱԹԷԹ				
Պիթլիս	40,000			
Կիզան	28,500			
Մուշ	80,000			
Պուլանըխ	19,000			
Սղերթ	18,000			
Մանազկերտ	10,000			
Կինճ	2,500	198,000		
ՎԱՆԻ ՎԻԼԱԹԷԹ				
Վան	90,000			
Լիմ-Կտուց	13,000			
Արճէշ	10,000		500	
Ալճայազ	10,000			
Հէրֆիարի	12,000			
Աղթամար	62,000	197,000		500
ԿԻԼԻԿԻՈՑ ՎԻԼԱԹԷԹ				
Ատանա				
Մերսին				
Թարսուս	79,000		150,000	
Տէօրթ Նոլ				
Օսմանիէ				
Սիս	18,000		15,000	
Հաճըն	21,000		500	
Ալեքսանտրէթ, Պէյլան	18,000		2,000	
Մարաշ	28,000		10,000	
Զէյթուն	28,000		5,000	
Ֆոնուզ	13,000	205,000		182,500
ՏՐԱՊԻԶՈՆԻ ՎԻԼԱԹԷԹ				
Տրապիզոն	35,000		10,000	
Սամսոն	30,000	65,000	5,000	15,000
ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼՍՈՑ ՎԻԼԱԹԷԹ				
Կոստանդնուպոլիս	150,000	150,000	150,000	150,000
ԻԶՄԻԹԻ ՎԻԼԱԹԷԹ				
Իզմիթ (Նիկոմիդիա)	72,500	72,500	20,000	20,000
	Փոխադրելի	1,655,500	Փոխադրելի	424,300

Վիլայէթի սահմաններուն մէջ գտնուող շրջաններ	Բ Ն Ա Կ Ջ Ո Ի Թ Ի Ի Ն			
	Պատերազմէն առաջ	Գումար	Պատերազմէն ետք	Գումար
	Փոխադրեալ	1,655,500	Փոխադրեալ	424,300
ԷՏԻՐՆԷԻ ՎԻԼԱՑԷԹ				
Էտիրնէ	7,500		7,000	
Ռոտոսթօ եւ Տարտանէլ	20,000	27,500		7,000
ՊՈՒՐՍԱՑԻ ՎԻԼԱՑԷԹ				
Պուրսա	35,000		11,000	
Պիլեճիք	18,000		4,500	
Պանտըրմա	9,000		5,800	
Պալըքեսիր	6,000			
Քիւթահիա եւ Աֆիոն-Գալահիսար	10,000	78,000	7,000	28,300
ԱՅՏԸՆԻ ՎԻԼԱՑԷԹ				
Զմիւռնիա	11,000	11,000	11,000	11,000
ՔԱՍԹԵՄՈՒՆԻԻ ՎԻԼԱՑԷԹ				
Քաստեմունի	10,000	10,000	8,000	8,000
ԱՆԿՈՐԱՑԻ ՎԻԼԱՑԷԹ				
Անկորա	22,000		3,500	
Կեսարիա	47,500		6,000	
Եոզկատ	45,500	115,000		9,500
ԳՈՆԻԱՑԻ ՎԻԼԱՑԷԹ				
Գոնիա	25,000	25,000	10,000	10,000
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՎԻԼԱՑԷԹ				
Երուսաղէմ	2,000		2,000	
Եաֆա	500	2,500	500	2,500
ՊԷՅՐՈՒԹԻ ՎԻԼԱՑԷԹ				
Պէյրութ	600	600	1,000	1,000
ՊԱՂՏԱՏԻ ՎԻԼԱՑԷԹ				
Պաղտատ	1,000	1,000	1,000	
Պասուպա (գաղթականներու կայան)			15,000	16,000
	Փոխադրելի	1,926,100	Փոխադրելի	517,600

Վիլայէթի սահմաններուն մէջ գտնուող շրջաններ	Բ Ն Ա Կ Ջ Ո Ի Թ Ի Ի Ն			
	Պատերազմէն առաջ	Գումար	Պատերազմէն ետք	Գումար
	Փոխադրեալ	1,926,100	Փոխադրեալ	517,600
ՊԱՍՐԱՑԻ ՎԻԼԱՅԷԹ				
Պասրա	400	400	400	400
ՄՈՒՍՈՒԼԻ ՎԻԼԱՅԷԹ				
Մուսուլ	800	800	800	800
ԴԱՄԱՍԿՈՍԻ ՎԻԼԱՅԷԹ				
Դամասկոս	400	400	400	400
ՀԱԼԷՊԻ ՎԻԼԱՅԷԹ				
Հալէպ	12,000			
Ֆիլիս	12,000		7,000	
Ուրֆա	33,000		9,000	
Այնթապ	30,000		52,000	
Անտիոք	12,000	99,000	5,000	73,000
	Ընդհ. գումար	2,026,700	Ընդհ. գումար	592,200

ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐՈՒ ԱՅԺՄՈՒ ԹԻՒԸ

Փոխադրեալ	592,200
● Այս թիւին վրայ պէտք է աւելցնել թիւը այն որքերուն, որոնք ստրկութեան մէջ կը գտնուին Միջագետքի անապատներու ցեղախումբերուն մօտ	5,800
● Թիւը կիներուն եւ որքերուն, որոնք տակաւին ստրկութեան մէջ կը պահուին թուրքերու մօտ, Անատոլուի մէջ	58,000
● Հայկական գաւառներէն կռվկաս ապաստանած գաղթականներուն թիւը	400,000
Վերապրողներու ընդհանուր թիւը	1,056,000

Պատերազմէն առաջ հայ բնակչութեան թիւը 2,026,700 րլլալով, Թուրքիոյ ջարդերու եւ տարագրութեան միջոցառումներու զոհ գացած հայերուն մօտաւոր թիւն է ուրեմն 1,000,000:

Գալով Թուրքիոյ հայ բնակչութեան այժմու թիւին, հետեւեալ ցուցատախտակը կը պարզէ կացութիւնը.—

Վեց վիլայէթներու շրջանները, ուր հայ բնակիչները մեծամասնութիւն են	Պատերազմէն առաջ	Գումար	Այս շրջաններուն մէջ գտնուող վերապրողներուն թիւը Պատերազմէն ետք
Էրզրում	215,000		1,500
Վան (առանց Արբաղի կամ Հեքքիարիի)	185,000		500
Պիթլիս (առանց Սղերթի)	180,000		
	Փոխադրելի	580,000	Փոխադրելի 2,000

Վեց վիլայէթներու շրջանները, ուր հայ բնակիչները մեծամասնութիւն են	Պատերազմէն առաջ	Գումար	Այս շրջաններուն մէջ գտնուող վերապրողներուն թիւը Պատերազմէն ետք
	Փոխադրեալ	580,000	Փոխադրեալ 2,000
Սվազ (առանց Ամասիոյ եւ Թոքատի)	165,000		13,000
Խարբերդ (առանց Մալաթիոյ)	168,000		35,000
Տիարպեքիր (առանց Մերտինի)	105,000	1,018,000	3.000

Վեց վիլայէթներու շրջանները, ուր հայ բնակիչները մեծամասնութիւն չեն	Պատերազմէն առաջ	Գումար	Այս շրջաններուն մէջ գտնուող վերապրողներուն թիւը Պատերազմէն ետք
Ամասիա եւ Թոքատ	60,000		3,800
Արբաղ եւ Հերֆիարի	12,000		
Մերտին	19,000		
Մալաթիա	36,000		
Սղերթ	18,000		
Տրապիզոնի Սանճաք	35,000	180,000	10,000
		1,198,000	66,800
● Այս շրջաններէն Կովկաս ապաստանող գաղթականներուն թիւը			400,000
● Պաֆուպայի գաղթակայանը ապաստանողներուն թիւր			15,000
		Ընդհ. գումար	481,800

Կովկաս ապաստանած 400,000 հայ վերապրողները մեծամասնութեամբ գաղթած են էրզրումի, վանի, Պիթլիսի եւ Տրապիզոնի շրջաններէն, որոնք ռուսերուն նախկին սահմանին մօտ կը գտնուէին:

Ներկայիս այս շրջանները ա՛յնքան աւերուած են, որ ամբողջովին անմարդաբնակ են: Թուրք բնակչութիւնը, որ պատերազմի առաջին տարիներուն ծանրօրէն հարուածուած էր սովէ եւ համաճարակներէ, ամէնէն սարսափելի կորուստներուն ենթարկուեցաւ, ռուսական արշաւանքին առջեւ՝ ձմրան խստագոյն շրջանին՝ 1916ի Յունուար ամսուն խոյս տալով իր բնակավայրէն:

Այս ամբողջ շրջանին մէջ, զոր կը պարփակեն նախագահ Ուուտրօ Ուիլսընի կռնմէ գծուած սահմանները, թուրք նախկին բնակչութենէն 100,000 վերապրողներ չկան: Նոյն շրջաններու հայ գաղթականները, որոնք Կովկաս ապաստանած են, եւ որոնք յարմար ժամի կը սպասեն իրենց հայրենի տուները վերադառնալու համար, առանձին կը կազմեն մեծամասնութիւնը թուրք տարրին վրայ:

Սվազի, Խարբերդի, Տիարպեքիրի վիլայէթներուն եւ Սղերթի ու Հերֆիարիի շրջաններուն մէջ թուրք բնակչութիւնը, հակառակ անոր որ չհարկադրուեցաւ հեռանալ իր բնակավայրերէն, սովի, համաճարակներու եւ ներքին կռիւներու հետեւանքով ծանր վնասներու ենթարկուեցաւ:

Այս շրջաններէն էրզրում, Վան եւ Պիթլիս թուրք բնակչութիւն փոխադրելու թրքական կառավարութեան փորձերը արդիւնք չտուին՝ այս վերջին շրջաններուն մէջ տիրող ամայութեան պատճառով: Քանի մը բաղաքներու մէջ է որ գոյութիւն ունին բնակիչներու խմբակցութիւններ կամ զօրանոցներ: Գեղջուկ բնակչութիւն չկայ, բացի բիւրտ վաչկատուներէ, որոնք հոն եկած են իրենց արջառներուն տեղափոխութեան հետեւելով· եւ թուրքերը Հայաստանի վրայ իրենց վերջին արշաւանքներէն ետք պարտադիր աշխատանքի ենթարկեցին հազարաւոր հայ երիտասարդներ՝ ասոնց ճամբաներու նորոգութեան աշխատանքներ գործադրել տալու համար, առանց մտահոգուելու անոնց ընտանիքներուն, որոնք կրնար ենթարկուիլ բաղաքային բնակչութիւնը:

ԿԻԼԻԿԻՈՅ ՄԷՋ

	Պատերազմէն առաջ	Պատերազմէն ետք	
Ատանայի Սանճաք եւ Ճեպէլ Պերեքէթ	79,000	150,000	(1)
Սիս	18,000	15,000	
Հաճըն	21,000	500	(2)
Ալեքսանտրէթ եւ Պէյլան	18,000	2,000	
Մարաշ	28,000	10,000	(3)
Զէյթուն	28,000	5,000	
Ֆոնուզ	13,000		
	205,000	182,500	

1) Այս թիւին մէջ կան ուրիշ շրջաններէ մեծ թիւով տարագիրներ, որոնք Ատանա ապաստանած են:

2) Պատերազմէն ետք Հաճընի մէջ կար 11,000 բնակչութիւն մը: Նշանակուած 500 անձերը վերջին ջարդերէն վերապրողներ են, որոնք ներկայիս Ատանա ապաստանած են:

3) Վերջին ջարդերէն առաջ Մարաշի եւ շրջակայ գիւղերուն մէջ կային 30,000 հայեր, որոնց մէջ կը գտնուէին՝ ուրիշ շրջաններէ հոն ապաստանած վերապրողներ:

ԹՈՒՐՔԻՈՅ ՄՆԱՑԵԱԼ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

	Պատերազմէն առաջ	Պատերազմէն ետք
Կոստանդնուպոլիս, Սամսոն, Իզմիտ, Էտիրնէ, Պրուսա, Այտըն, Քասթեմունի, Անկորա, Քոնիա, Երուսաղէմ, Պէյրութ, Պաղտատ (առանց Պաճուպայի գաղթակայանին), Պասրա, Մուսուլ, Դամասկոս եւ Հալէպ	623,700	416,700

(ՊՈԼՍՈՑ ՀԱՑՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԱՐԽԻՒՆԵՐԷՆ)



Հայ Հոգեւորականներ Երեւանի «Մայր Հայաստան»ի Յուշարձանին Առջեւ

Archbishop
Vicken Aykazian

Կողքի գծագրութիւն՝ Ս. Սամտանեանի

«ՆԱՀԱՏԱԿ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ»ու բաժինը (էջ 22) քաղուած է
«Էջմիածին» ամսագրէն (1965, Ը–Դ–Դ, էջ 60-70)

«ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ»ը (էջ 33) քաղուած է «Ճուշամատեան
Մեծ Եղեռնի»էն (1965, Պէյրութ, էջ 215- 220)